

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԸ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ
ԴԱՍԵՐԻՆ

ԿԱՏԱՐՈՂ՝ Վեբիլյան Աննա

ՂԵԿԱՎԱՐ՝ Ամիրխանյան Արմեն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Բովանդակություն.....	2
Ներածություն.....	3
Միջառարկայական կապերը աշխարհագրության Դասերին.....	6
Միջառարկայական կապերը դասի օրինակով.....	14
Եզրակացություն.....	17
Գրականության ցանկ	18

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Աշխարհագրությունը յուրահատուկ տեղ է զբաղեցնում գիտությունների ամբողջական համակարգում: Աշխարհագրական գիտությունների համակարգում առանձնանում են բազմաթիվ ճյուղեր ու ենթաճյուղեր, որոնք ունեն իրենց համապատասխան հետազոտության օբյեկտներն ու առարկաները: Աշխարհագրական գիտելիքները հանգեցնում են այն մտքին, որ աշխարհը ճանաչելի է նյութական, միասնական, բնության ու հասարակության բաղադրիչները սերտ կապի մեջ են, դրանք առանձին-առանձին ու միասնաբար անընդհատ զարգանում ու փոփոխվում են:

Աշխարհագրությունը, որպես գիտություն, բնական ու հասարակական գիտությունների համակարգերի փոխադարձ շփման միջակայքում է և սերտորոն կապված է դրանցից յուրաքանչյուրի հետ [10]

Ժամանակակից կյանքի պայմաններում ուսուցիչը կրթական գործընթացում ստացել է ստեղծագործական լայն հնարավորություններ, մեթոդների, ուսուցման հնարների ակտիվ որոնման ազատություն:

Կրթության բարոփոխումների առաջնային խնդիրներից մեկը սովորողների իմացական ակտիվության ու շահագրգռվածության բարձր մակարդակի ապահովումն է: Տարբեր գիտություններ միևնույն օբյեկտը տարբեր տեսանկյուններից դիտարկելու ընդհանուր եզրեր ունեն:

Միջառարկայական կապերի հաստատման նպատակն է ուսուցման գործընթացը կազմակերպել այնպես, որ այն նպաստի բնության օրենքների մասին սովորողների գիտական

պատկերացումներն ամբողջական համակարգի մեջ տեսնելու կարողությունների ձևավորմանը: Միջառարկայական կապերը հնարավորություն են տալիս ստեղծել միասնական, ինտեգրված դասեր, որոնց ժամանակ սովորողներն աշխատում են հեշտությամբ և հետաքրքրությամբ՝ արդյունքում յուրացնելով մեծ ծավալով օգտակար նյութեր, ձեռք բերելով գիտակցված գիտելիքներ և ձևավորելով համադրելու, ընդհանրացնելու կարողություններ:

Ժամանակակից պայմաններում անհրաժեշտություն է առաջանում սովորողների մոտ ձևավորել ոչ թե մասնավոր, այլ ընդհանրացված ունակություններ, որոնք լայն ոլորտներում ունեն գիտելիքը տեղափոխելու հատկություն: Միջառարկայական կապերը արտացոլում են դաստիարակության և ուսուցման համալիր մոտեցում:

ՄԻՋԱՌԱԿԱՅՑԱԿԱՆ ԿԱՊԵՐՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ

ԴԱՍԵՐԻՆ

Ժամանակակից հանրակրթական դպրոցի հիմնական խնդիրը ընդհանուր գիտելիքների , հմտությունների , դիրքորոշումների և արժեքների ամբողջական համակարգի ձևավորումն է սովորողի և շրջանավարտի մոտ , ինչը հնարավոր չէ իրականացնել ուսուցման գործընթացում առանց միջառարկայական կապերի հաստատման :

Միջառարկայական կապերը կարող են օգնել աշակերտներին հասկանալ շրջապատող աշխարհը ,նրա հատկությունները , հիմնական երևույթները ,այնտեղ ընթացող գործընթացներն ու օրինաչափությունները : Այսպիսով դպրոցական առարկաների փոխադարձ կապակցվածությունը սովորողների մոտ ձևավորում է այն համոզմունքը , որ գիտության տարբեր ճյուղերի միջև չկան կտրուկ սահմաններ ,որ գիտության տարբեր ոլորտները միմյանցից անկախ ու կտրված չեն ,այլ փոխադարձաբար կապված են միմյանց հետ :

Աշխարհագրության գիտության կազմում ձևավորվել են 2 գլխավոր ճյուղեր ` բնական կամ ֆիզիկական աշխարհագրությունը և հասարակական կամ սոցիալ – տնտեսական աշխարհագրությունը, քանի որ այն միակն է ,որ միաժամանակ և՛ բնական , և՛ հասարակական գիտություն է[10]:

Աշխարհագրության դասերին դա արտահայտվում է մրջառարկայական կապերի միջոցով ` հայոց լեզվի , գրականության ,պատմության ,հասարակագիտության, ՀԵՊ-ի, ռազմագիտության, օտար լեզուների, քիմիայի, ֆիզիկայի,կենսաբանության , մաթեմատիկայի,

ինֆորմատիկայի,արշավների ժամանակ նույնիսկ ֆիզկուլտուրայի հետ:

Հայոց լեզու-աշխարհագրություն

Վերլուծել և ընկալել տարբեր բնույթի գրական հայերեն տեքստեր և հասկալալ դրանց հիմնական գաղափարը:Կազմել ընտրված նպատակին ,խնդիրներին ,լսարանին համապատասխան գրագետ գրավոր և բանավոր խոսք :Կատարել անունների և հասկացությունների ստուգաբանություն :

Գրականություն- աշխարհագրություն

Որոշ գրական ստեղծագործություններում բնութագրվող տեսարանները ,երևույթները ,դեպքերը անմիջական կապ ունեն աշխարհագրության հետ ,օր.՝ <<Նավապետ Գրանտի որդիները>>, <<Կորուսյալ աշխարհ>> և այլն:

Պատմություն-աշխարհագրություն

Պատմության հետ սերտ կապը երևում է հատկապես <<Աշխարհի քաղաքական քարտեզ>> թեման ուսումնասիրելիս , որտեղ ներկայացվում են պատմական այն կանոն իրադարձությունները ,որոնք անմիջական ազդեցություն են ունեցել քաղաքական քարտեզի ձևավորման վրա (գաղութային համակարգի փլուզում, կայսրությունների փլուզում ,առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմներ և այլն):

Ինչպես նաև ՀՀ և ԼՂՀ ձևավորման գործընթացն ու ժամանակագրությունը,տնտեսության զարգացման վրա ազդող պատմական գործոնները[8,9]:

Քաղաքական փոփոխությունները

1914



1918



1939



1945



Հասարակագիտություն – աշխարհագրություն

Մրա արդյունքում սովորողները կկարողանան ներկայացնել տարբեր ժողովուրդների մշակութային առանձնահատկությունները , տարբերակել մեծ և փոքր խմբերը՝ ըստ տարբեր հատկանիշների (ըստ սեռի, տարիքի, ազգային,


կրոնական պատկանելության, լեզվի, սոցիալական վիճակի) , պայքարել խտրականության դեմ: Կկարողանան ընկալել շրջակա միջավայրը որպես գեղագիտական և հոգևոր – մշակութային արժեք: Գաղափար կունենան պետական կարգի, կառուցվածքի և կառավարման ձևի մասին: Բնական ռեսուրսների սակավության պայմաններում կկարողանա որոշումներ կայացնել և այլն:



Ռազմագիտություն-աշխարհագրություն

Ժամանակակից աշխարհում կատարվող ռազմաքաղաքական գործընթացներից զերծ չի մնում ՀՀ-ն: Այսօր ավելի , քան երբևէ, կարևորվում է ռազմահայրենասիրական դաստիարակության դերը, նախագորակոչային և զորակոչային տարիքի սովորողի

պատրաստվածությունը ծառայության : Հայրենիքի պաշտպանության գործում հաջողություններ և հաղթանակներ ունենալու համար կարևորվում է նաև տեղանքում կողմնորոշվելու, չափումներ կատարելու(ազիմուտների, անկյունների և հեռավորությունների որոշում), քարտեզից օգտվելու կարողունակությունը,ինչն անհնար է առանց աշխարհագրական գիտելիքների[9,6]:



ՀԵՊ-աշխարհագրություն

Բնակչության կրոնական կազմն ուսումնասիրելիս սովորողներին ներկայացվում են համաշխարհային և ազգային կրոնները,դրանց հետևորդների թիվը,առանձնացվում է հայ առաքելական եկեղեցին,համեմատվում են որոշ կրոնների ընդհանուր գաղափարները,ծեսերը,կրոնական սովորույթները քրիստոնեության հետ[10]:



Օտար լեզուներ-աշխարհագրություն

Օտար լեզուներն օգնում են տեղանունների , հասկացությունների , օտարահունչ բառերի թարգմանության գործում(օր.՝ գեոգրաֆիա,Անտարկտիդա,Էկվադոր,Անխել, իգոբար, իգոթերմ և այլն)[5]:

Քիմիա- աշխարհագրություն

Քիմիայի հետ կապն արտահայտվում է հատկապես էկոլոգիական թեմաների ժամանակ , երբ ներկայացվում է տարբեր ոլորտների աղտոտվածությունը քիմիական նյութերով, կարևորվում է տարբեր ռեսուրսների հատկանիշների իմացությունը(սև և գունավոր մետաղաձուլության մեջ,քիմիական արդյունաբերությունում), առաջնային և երկրորդային աղտոտման ժամանակ առաջացած նյութերը , դրանց վտանգավոր հետևանքները, մթնոլորտային գազերի ուսումնասիրությունը[6,10,11]:

Ֆիզիկա- աշխարհագրություն

Ֆիզիկան անբաժանելի է աշխարհագրական մի շարք երևույթների բացատրության ժամանակ : Մասնավորապես , կապը հստակ արտահայտված է երկրի պտույտը , ջրի շրջապտույտ , բնական երևույթներ , մթնոլորտային ճնշում , օդի



ջերմաստիճանի տատանումներ, օդի խոնավություն, մակընթացություն-տեղատվություն, քամիներ, Երկրի առաջացման վարկածները, օվկիանոսի ջրի շարժումը և միջառվածքային թեմաներ ուսումնասիրելիս[9]:

Կենսաբանություն-աշխարհագրություն

Կենսաբանության դերը մեծ է կենսաբազմազանության , կենսոլորտի , բուսական և կենդանական աշխարհի տարածման օրինաչափությունների, բնական զոնաների , հատուկ պահպանվող տարածքների , օվկիանոսի բուսական և կենդանական աշխարհի ուսումնասիրության ժամանակ[5,8,10]:

Ինֆորմատիկա-աշխարհագրություն

Արդի աշխարհում ցանկացած բնագավառ անհնար է պատկերացնել առանց ՏՀՏ գործիքների կիրառման: Աշխարհագրական դիագրամների կազմումը , միջառվածքային երևույթների ցուցադրությունը , էլեկտրոնային քարտեզների միջոցով աշխատելը, երթուղին գտնելը , GPS համակարգով կողմնորոշվելը և միջառվածքային գործողություններ կատարվում են համակարգիչների միջոցով: Դասերի ընթացքում մեծ կիրառություն ունեցող տեսասահիկներն ու տեսանյութերը, որոնք ավելի մատչելի են դարձնում ցանկացած երևույթի բացատրություն, նաև հեռավար դասերի կազմակերպումը համակարգչային իմացություն են պահանջում:



Մաթեմատիկա-աշխարհագրություն

Անխզելի է աշխարհագրության կապը մաթեմատիկայի հետ: Առանց տարրական մաթեմատիկական գիտելիքների և հմտությունների անհնար է մի շարք աշխարհագրական թեմաների ուսումնասիրություն և խնդիրների լուծում: Աշխարհագրական ցանկացած խնդիր պահաջում է նաև մաթեմատիկական գիտելիքներ: Բնակչության աշխարհագրության, մթնոլորտային ճնշման, խոնավության, ջերմաստիճանի, հարաբերական և բացարձակ բարձրության, արեգակի ճառագայթների անկման անկյան, գետի ծախսի, հոսքի, անկման, թեքության, պայմանական վառելիքի, տրանսպորտի աշխատանքը բնութագրող ցուցանիշների, բերքատվության, ՀՆԱ-ի, մասշտաբի, աշխարհագրական կոորդինատների, ազիմուտների հետ

կապված ցանկացած խնդիր և առաջադրանք պահանջում է մաթեմատիկական գործողություններ , հաշվարկներ կատարելու կարողություն, տրամաբանություն:

Միջառարկայական կապերը դասի օրինակով

Բոլոր գիտություններն այս կամ այն չափով կապված են միմյանց հետ:Ժամանակակից ուսուցչի խնդիրներից է սովորողին օգնել բացահայտել և ցույց տալ միջառարկայական կապերը կոնկրետ օրինակով:

- Անձնական վարած դասի օրինակ,որտեղ հստակ արտահայտված են միջառարկայակն կապերը[10].

- դասարան` 11-րդ

- թեմա <<Մթնոլորտ:Մթնոլորտի աղտոտման աղբյուրները և հետևանքները:Մթնոլորտի պահպանումն աղտոտումից>>

Աշխարհագրություն- Բնութագրել մթնոլորտը ` որպես աշխարհագրական թաղանթի ոլորտ, որպես բնական ռեսուրս, կարևորել նրա դերը Երկիր մոլորակի վրա կյանքի գոյության պայմանների առաջացման գործում, թվել տնտեսության այն բնագավառները, որոնք առավել շատ են աղտոտում մթնոլորտը(գյուղատնտեսություն, արդյունաբերություն, տրանսպորտ),թվել էլեկտրակայանների տեսակները,որոնք օգտագործում են մթնոլորտային և տիեզերական ռեսուրսները(հողմակայաններ,արևային էլեկտրակայաններ):

Քիմիա- թվել մթնոլորտը կազմող գազերը,ներկայացնել թթվածնի և ածխաթթու գազի դերն աշխարհագրական թաղանթում, թվել տարբեր աղբյուրներից արտանետված գազերը, ջերմոցային էֆեկտի առաջացման պատճառներն ու

հետևանքները,բացատրել թթվային անձրևների , օդի առաջնային և երկրորդային աղտոտման, լուսաքիմիական սմոգի առաջացման պատճառներն ու հետևանքները,անդրադառնալ տարբեր նյութերի ՍԹՆ-ներին:

Ֆիզիկա- ներկայացնել մթնոլորտի տաքացման օրինաչափությունները,թվել էլեկտրաէներգիայի ստացման աղբյուրները,մեկնաբանել ԱԷԿ-ներից,ՋԷԿ-երից, ՀԷԿ-երից և էլեկտրաէներգիայի ստացման այլ աղբյուրներից արտանետվող նյութերի ազդեցությունը , մասնավորապես ջերմային աղտոտման առաջացման պատճառները:

Կենսաբանություն- կարևորել մթնոլորտի դերը կենդանիների և բույսերի գոյության համար, գնահատել մթնոլորտի մաքրության պահպանության գործում կանաչ տարածքների , անտառների դերը, նշել աղտոտված մթնոլորտի վնասակար ազդեցությունը կենսաբազմազանության վրա:

Հայաստանի աշխարհագրությաուն- ներկայացնել ՀՀ օդային ավազանի աղտոտման հիմնական աղբյուրները, առավել աղտոտված օդային ավազան ունեցող քաղաքները,նշել ՀՀ օդային ավազանի մաքրությանն ուղղված միջոցառումները:





Հասարակագիտություն- կարևորել մթնոլորտի (և այլ ոլորտների) մաքրության պահպանության գործում միջազգային համագործակցությունը, ընդունել օրենքներ, որոնց նպատակն է սահմանափակել կամ վերահսկել տարբեր բնագավառներից արտանետումների քանակը, հետևել մարդու՝ մաքուր միջավայրում ապրելու իրավունքին:

Միջառարկայական կապերի միջոցով դասեր եմ ունեցել նաև
<<Ջուր>> թեմայից-աշխարհագրություն-քիմիա-հայոց լեզու-
գրականություն

<<Համաշխարհային կրոններ>>թեմայից - աշխարհագրություն-
ՀԵՊ- հայոց լեզու

<<Մեծ Բրիտանիա>> թեմայից - աշխարհագրություն-
անգլերեն:



Եզրակացություն

Այսպիսով, միջառարկայականությունը ուսուցման ժամանակակից սկզբունք է, որն ազդում է մի շարք առարկաների ուսումնական նյութի ընտրության և կառուցվածքի վրա, ուժեղացնում է սովորողի գիտելիքների համակարգվածությունը, ակտիվացնում է ուսուցման մեթոդները, կենտրոնանում է ուսուցման կազմակերպման համալիր ձևերի կիրառման վրա՝ ապահովելով ուսումնադաստիարակչական գործընթացի միասնությունը:

Միջառարկայական համակարգված ներդրումը թույլ է տալիս ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել, բարձրացնել սովորողի ինտելեկտուալ մակարդակը, ավելացնել նրա հետաքրքրությունն ուսման նկատմամբ: Միջառարկայական կապերով կազմակերպված ինտեգրված դասերը հետաքրքրում են սովորողներին, օգնում են նրանց բանավոր խոսքի զարգացմանը, նպաստում են տրամաբանության զարգացմանը, հարստացնում են բառապաշարը, ձևավորում են նաև գեղագիտական ճաշակ, երևույթները բազմակողմանի ընկալելու ունակություն:

Գրականության ցանկ

1. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ: Տեսություններ, մեթոդներ, գնահատում: - Ս.Վարդումյան, Ն.Ջաղինյան, Լ.Հարությունյան, Գ.Վալերա, Երևան, 2005
2. Աշխարհագրության ընթացիկ գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու, Երևան, 2007
3. Աշխարհագրություն. Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր, Երևան, 2007
4. Աշխարհագրություն. Ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ: Ընթացիկ գնահատման մեթոդաբանություն, Երևան, 2009
5. Աշխարհագրություն 6, Ա.Հովսեփյան, Ա.Գրիգորյան, Մ. Մանասյան, Երևան, 2018
6. Աշխարհագրություն 7, Թ. Վարդանյան, Ա. Պոտոսյան, Վ. Ասատրյան, Լ. Հակոբյան, Երևան, 2023
7. Աշխարհագրություն 8, Մ. Մանասյան, Ռ. Մարգարյան, Ա. Հովսեփյան, Գ. Հովհաննիսյան, Երևան, 2020, մաս 1, մաս 2
8. Հայաստանի աշխարհագրություն 9, Մ. Մանասյան, Ա. Հովսեփյան, Երևան, 2020, մաս 1, մաս 2
9. Աշխարհագրություն 10, Մ. Մանասյան, Թ. Վարդանյան, Ա. Հովսեփյան, Ա. Գրիգորյան, Գ. Հովհաննիսյան, Ա. Պոտոսյան, Երևան, 2017
10. Աշխարհագրություն 11, ա. Պոտոսյան, Մ. Մանասյան, Իս. Սարգսյան, Թ. Վարդանյան, Ա. Հովսեփյան, Երևան, 2017

11. Աշխարհագրություն 12, Մ. Մանասյան, Ա. Հովսեփյան,
Ա.Պոտոսյան, Երևան, 2018

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱՎ

*ՈՒՍՈՒՄՆԱԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԻՆ*

ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՎԵՏԻՔ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՄԵՆ ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

Բովանդակություն

<u>Ներածություն</u>	<u>3</u>
ԳԼՈՒԽ 1. ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽԱՂԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ <u>Ուսուցման խաղային տեխնոլոգիաները աշխարհագրության դասին</u>	<u>4</u>
<u>Աշխարհագրության ուսուցման մոդուլային տեխնոլոգիայի տարրերի կիրառումը խաղային տեխնոլոգիաներում</u>	<u>6</u>
<u>Աշխարհագրության պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի տարրերի կիրառումը խաղային տեխնոլոգիաներում</u>	<u>6</u>
Դպրոցականների աշխարհագրական գործունեության կազմակերպման նախագծային տեխնոլոգիայի տարրերի կիրառումը խաղային տեխնոլոգիաներում	8
Տեղեկատվական տեխնոլոգիայի ծրագրի կիրառումը խաղային տեխնոլոգիաներում	9
Հենարանային տրամաբանական սեղմագրի տեխնոլոգիայի տարրերի կիրառումը խաղային տեխնոլոգիաներում	9
Գիտելիքի ամբողջական յուրացման տեխնոլոգիան աշխարհագրության ուսուցման խաղային տեխնոլոգիայի համատեքստում	10
ԳԼՈՒԽ 2. ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍԱԶԵՎԵՐԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	
Աշխարհագրության տեխնոլոգիական դասին ներկայացվող ժամանակակից պահանջները	11
Խաղային տեխնոլոգիայով դասի մոդել՝ բլոկ-մոդուլային տեխնոլոգիայի կիրառմամբ	12
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ	17
ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	19

Ներածություն

Գաղտնիք չէ, որ շատ աշակերտներ աշխարհագրությունը համարում են ոչ այնքան կարևոր առարկա: Այդ պատճառով էլ գտնում են, որ անիմաստ ժամանակ են ծախսում նրա վրա: Ինչպե՞ս անցկացնել աշխարհագրության դասը, որպեսզի անարդյունավետ և անհետաքրքիր լինելուց դառնա հետաքրքիր և արդյունավետ: Այս հարցի պատասխանը կարող ենք գտնել ուսումնասիրելով աշխարհագրության ուսուցման խաղային տեխնոլոգիան: Անառարկելի է այն փաստը, որ խաղը երեխաների կյանքում զարգացնող դեր է ունի: Աշխարհագրական նյութը յուրացվում է աշակերտի կողմից խաղային իրավիճակի պահանջով, այլ ոչ թե ուսուցչի պարտադրանքով: Խաղերի հիմնական շարժառիթը արդյունքը չէ, այլ բուն գործընթացը: Այն մեծացնում է դասի դիդակտիկական նշանակությունը, բացահայտում է աշակերտի ստեղծագործական հնարավորությունները, դաստիարակում է հուզարժեքային վերաբերմունք, նպաստում է աշխարհագրական մտածողության ձևավորմանը, ակտիվացնում է աշակերտի մտածողությունը, նոր շունչ է հաղորդում աշխարհագրության ուսուցման գործընթացին:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել խաղային տեխնոլոգիայի ազդեցությունը աշխարհագրության ուսուցման արդյունավետության բարձրացման վրա: Հետազոտության նպատակին հասնելու համար, առաջադրվել են հետևյալ խնդիրները՝

1. Բացահայտել ուսումնախաղային տեխնոլոգիայի էությունը,
2. Պարզել աշխարհագրության ուսուցման տարբեր տեխնոլոգիաների տարրերի կիրառումը խաղային տեխնոլոգիայի համատեքստում,
3. Մշակել փորձարարական խաղային տեխնոլոգիայով կազմված փորձարարական դասի մոդել:

Հետազոտությունն ունի տեսական նշանակություն՝ վերլուծվել է աշխարհագրության ուսուցման խաղային տեխնոլոգիայի վերաբերյալ նոր ժամանակակից տեղեկատվություն, ինչպես նաև գործնական նշանակություն՝ մշակվել է խաղային տեխնոլոգիայով նորարարական դասի մոդել աշխարհագրություն առարկայից, որի հիման վրա կարելի է մշակել տարբեր դասարանների համար նախատեսված թեմաներով դասանյութեր:

Այդպիսի դասերի անհրաժեշտությունն ու դիդակտիկական արժեքը արդեն ապացուցված է, և ցանկալի է նշել, որ դրանք կարևոր են աշխարհագրության ուսումնասիրման ոչ միայն սկզբնական փուլում, այլև ողջ ընթացքում: Ընդհանրապես խաղը բացի ժամանցային երևույթ լինելուց, ունի նաև դաստիարակչական, ուսուցողական նշանակություն: Այս դեպքում այն հանդես է գալիս որպես միջոց, մեթոդ գիտելիքը տեղ հասցնելու համար: Խաղը լայն տարածում ունի ժողովրդական դաստիարակության և դպրոցական շրջանում: Խաղային տեխնոլոգիա հասկացությունը ներառում է մեթոդների բավականին մեծ խումբ:

ԳԼՈՒԽ 1
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽԱՂԱՅԻՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Ուսուցման խաղային տեխնոլոգիաները աշխարհագրության դասին

Ներկայումս ժամանակակից կրթությունը ենթարկվում է էական փոփոխությունների: Այս համատեքստում անհրաժեշտություն կա ուսուցման մեթոդների, միջոցների կազմակերպման ձևի թարմացում: Դա կապված է նոր տեխնոլոգիաների զարգացման հետ:

Մանկավարժական ցանկացած տեխնոլոգիա ունի աշակերտների գործունեությունը ակտիվացնող մեթոդներ: Այդպիսի տեխնոլոգիաները հիմնականում վերաբերում են խաղայինին:

Առավել օպտիմալ է ուսուցիչների այն տեսակետը, որ աշխարհագրության դասին պետք է օգտագործել խաղեր, որը դրական ազդեցություն կունենա երեխաների զարգացման վրա, կակտիվացնի երեխաների ինքնուրույնությունը, կընդլայնի ուշադրությունը, կբարելավի ու կբարձրացնի գիտելիքի որակը:

Չնայած աշխարհագրության ուսուցման խաղային տեխնոլոգիաների առավելությունների, հատկապես ավագ դպրոցում քիչ տարածում է գտել: Խաղը կարող է, և պետք է ավելի ակտիվ ներգրավվի ուսուցման գործընթացին: Բայց չենք կարող աշխարհագրության դասին չարաշահել խաղային ձևը: Մա կարող է բերել առարկայի պարզեցման:

Չնայած նրան, որ խաղերը ուսուցման պրակտիկայում օգտագործվում են շատ վաղուց, հոգեբանությունում, դիդակտիկայում և մեթոդիկայում գոյություն ունի <<խաղ>> հասկացության միասնական մոտեցում: Խաղը դիտարկվում է տարբեր տեսանկյուններից.

1. Որպես ուսուցման մեթոդ՝ ուղղված մոդելավորման իրական գործունեությանը,
2. Որպես մեթոդի ուսուցում՝ ուղղված ուսումնական գործունեության մոտիվացիային,
3. Որպես ակտիվ ուսուցման ձև(ոչ ստանդարտ դաս),
4. Որպես ուսումնական գործունեության կազմակերպման ձև (կոլեկտիվ աշխատանքի ձև),
5. Որպես ուսուցման նոր տեխնոլոգիա:

Գոյություն ունեն խաղերի բազմաթիվ դասակարգում՝ կախված գործոնից, իրենց հիմնական իրավիճակից: Կանխատեսումային խաղերի տեղը կարող է լինել սահմանված ժամկետում և արտաժամյա, որի ընթացքում կատարվում է նոր նյութի ուսումնասիրում, գիտելիքների և հմտության ստուգում, ամրագրում և ընդհանրացում: Ուսուցման կազմակերպման ձևերն են՝ անհատական և կոլեկտիվ գործունեություն:

Ժամանակակից պրակտիկայում աշխարհագրության ուսուցումը մեծ ճանաչում է ստանում խաղային տեխնոլոգիաների շնորհիվ:

Ուսուցիչների կարծիքը խաղային տեխնոլոգիաների վերաբերյալ տարբեր է: Որոշները այն օգտագործում են ակտիվորեն՝ համարելով արդյունավետ: Մյուսները նախընտրում են դասարանային ավանդական ձևը: Խաղային տեխնոլոգիաների հետագա զարգացումը և մանկավարժական հնարավորությունների լիարժեք օգտագործումը, հատկապես աշակերտների ինքնուրույն տեսակետը, հետաքրքրություն է ցուցաբերում խաղային տեխնոլոգիաների վերաբերյալ:

Աշխարհագրության ուսուցման ժամանակ օգտվելով խաղային տեխնոլոգիաներից լուծում ենք բազմազան խնդիրներ: Դրանք զարգացնում են թեմայի ճանաչողական հետաքրքրությունը, դասի ժամանակ ակտիվացնում են աշակերտների ուսուցման գործընթացը, օգնում են աշակերտների ստեղծագործական ձևավորմանը, այնպես, ինչպես շատ խաղեր հաճախ ակնկալում են ուսուցման պրոբլեմային բնույթ, որոնց համար կա հարցերի տարափ, որոնց պետք է տալ պատասխան, իսկ լուծելու ճանապարհը պարզ չէ: Խաղերից շատերը տալիս են փոխադարձ ուսուցման հնարավորություն, այնպես, ինչպես խմբային աշխատանքի ձևը և խորհրդակցական գործընթացը: Ինտելեկտուալ զարգացած երեխաները զբաղեցնում են առաջատար դիրք՝ դասավանդման խմբային խաղերում: Քննարկումները հնարավորություն են տալիս շփման ընթացքում ձևավորել համբերատարություն հասակակիցների հանդեպ: Խաղերը դասի կառուցվածքում ներառելու ժամանակ հնարավոր է թեթևացնել երեխաների հոգնածությունը: Լավ մտածված խաղերը կարող են նպաստել ընկերական հարաբերությունների ձևավորմանը, ինչպես նաև երեխաների մոտ թողնում են զգացմունքային մեծ ազդեցություն:

Աշխարհագրական խաղերը համակցելով մանկավարժական այլ տեխնոլոգիաների հետ բարձրացնում են աշխարհագրական կրթության արդյունավետությունը: Սակայն ամենալավ խաղերն անգամ չեն կարող համարվել ձեռքբերում ամբողջ ուսումնադաստիարակչական գործընթացում, որովհետև անպայման չէ խաղը դիտարկել ամբողջ համակարգի ձև և ուսումնական աշխատանքի մեթոդ:

Խաղային շատ ցուցանիշներ բավականին տարբեր են՝ գործունեության ոլորտում, մեթոդաբանությունում, մանկավարժական գործընթացում՝ կախված խաղային միջավայրից, նպատակից, գոյություն ունեն տարբեր դասակարգում:

Դասավանդման գործընթացում խաղի ավելի արդյունավետ օգտագործումը ենթադրում է հայտնաբերել աշակերտների տեսակետը խաղային գործունեության ոլորտում:

Աշխարհագրության ուսուցման մոդուլային տեխնոլոգիայի տարրերի կիրառումը խաղային տեխնոլոգիաներում

Նոր տեխնոլոգիաներից մեկը, որը հաստատուն ներառված է ուսումնական գործընթացում, հայտնի է որպես մոդուլային ուսուցում: Նրա հիմնական իմաստը կայանում է նրանում, որ դպրոցականը պետք է սովորի ինքնուրույն, իսկ ուսուցիչը՝ վերահսկի նրա ուսումնական գործունեությունը:

Այս տեխնոլոգիայի հիմնական հասկացողությունը մոդուլն է:

Մոդուլը- դա նպատակային ֆունկցիոնալ հանգույց է, որը համատեղում է աշակերտների ուսումնական բովանդակությունը և տեխնոլոգիական հմտությունները:

Մոդուլային ուսուցման էությունը կայանում է նրանում, որ աշակերտը ինքնուրույն կամ ուսուցչի օգնությամբ մոդուլային աշխատանքի գործընթացում հասնում է ուսումնաճանաչողական գործունեության կոնկրետ նպատակին: Մոդուլը կարելի է դիտարկել որպես ուսուցման ծրագիր, ուսուցման մեթոդ, ուսումնաճանաչողական գործունեության մակարդակ:

Ցանկացած մոդուլային ծրագրի հիմքում ընկած է ընդհանուր նպատակ: Մոդուլային ծրագրերի ստեղծումը միշտ սկսում է դասարանում տեղաբաշխվածների գլխավոր հետազոտական մտքով, որի ներսում ձևավորվում է ուսուցման թեմայի նպատակը, ապա ուսուցման բովանդակությունը կառուցվում է այդ մտքերի շուրջ:

Մոդուլային տեխնոլոգիան ներկայացնում է դասի ճիշտ կառուցվածքը, ուսուցչին տալիս է հնարավորություն տեսնել ամբողջ դասարանը, յուրաքանչյուր աշակերտի հետ աշխատել անհատական:

Արդյունքը, աշակերտների ուսուցման որակի բարձրացումն է:

Չնայած մոդուլային տեխնոլոգիայի ճկունությանը և անկաշկանդությանը, ունի նաև իր խնդիրները և սահմանափակումները: Դա վերաբերում է կանոնավոր ուսուցման գործընթացի անհրաժեշտությանը, դպրոցական աշխարհագրության մոդուլային ծրագրերի զարգացման անհրաժեշտությանը, ուսուցիչների մանկավարժական աշխատանքի զարգացման ինստրուկցիային:

Աշխարհագրության պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի տարրերի կիրառումը խաղային տեխնոլոգիաներում

Պրոբլեմային ուսուցումը նոր չի հայտնվել: Այն օգտագործել են 20-րդ դարից: Դա բացատրվում է նրանով, որ պրոբլեմը կազմում է ճանաչողական օրինաչափություններից մեկը, խթանում է աշակերտների որոնողական գործունեությանը, զարգացնում է աշակերտների ստեղծագործական միտքը: Վերջին ժամանակներում պրոբլեմային մոտեցումը անցում կատարեց առաջադիմական

հասկացողությունների. ուսուցման որոնողական ձևերի շարքը, դարձավ բնորոշ ժամանակակից աշխարհագրության դասին:

Պրոբլեմային ուսուցումը կարելի է դիտարկել տարբեր իրավիճակներում.

- Որպես ուսուցման նոր տիպ,
- Որպես ուսուցման մեթոդ,
- Որպես ուսուցման մոտեցում կամ սկզբունք,
- Որպես նոր դիդակտիկական տեխնոլոգիա:

Այս բոլորի համար ընդհանուր է այն, որ պրոբլեմային ուսուցման շրջանակը պրոբլեմային իրավիճակներում և պրոբլեմի լուծման ժամանակ աշակերտներին սիստեմատիկաբար միացնում է ուսուցիչներին:

Հոգեբանական հետազոտությունները ապացուցում են, որ մտածելը ծագել է պրոբլեմային իրավիճակներում և ուղղված է այն որոշելուն:

Պրոբլեմային իրավիճակ նշանակում է, որ աշակերտը իր գործունեության գործընթացում հանդիպում է ինչ-որ անհասկանալի, անհայտի: Այդ դեպքում, պրոբլեմային իրավիճակի գլխավոր տարրը հայտնի չէ:

Պրոբլեմային ուսուցման դասընթացը անցնում է դասի ընթացքում տարբեր պրոբլեմային իրավիճակների ստեղծումով: Այն համընկնում է դիդակտիկայի կարգավիճակի հետ, հնարավոր է այն իրականացնել տարբեր մեթոդների օգնությամբ:

Աշակերտների պրոբլեմային հանձնարարությունների իրականացման գործընթացը անցնում է ստեղծագործական գործունեության փորձի ձեռքբերմամբ: Երբեմն ուսուցման շոշափելի արդյունքների հասնելու համար անհրաժեշտ է կիրառել այդպիսի հարցերի և հանձնարարությունների համակարգ: Դիդակտիկայում կան այդպիսի խնդիրների կառուցման տարբեր մոտեցումներ:

Պրոբլեմային ուսուցման յուրահատկությունը իր համարգվածության մեջ է: Ուսուցիչը մինչև դասի պլանավորելը պետք է առանձնացնի հնարավոր թեմաները և նրա առանձին դասերը, որպեսզի կազմակերպի պրոբլեմային ուսուցում, որի զարգացման ճանապարհին իրականացվում է պրոբլեմային մոտեցումը:

Աշխարհագրության պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիայի որոնողական, ստեղծագործական, ճանաչողական տարրերը օգնում են լուծել ուսումնախաղային տեխնոլոգիայի ընթացքում առաջացած տարբեր պրոբլեմային իրավիճակները:

Դպրոցականների աշխարհագրական գործունեության կազմակերպման նախագծային տեխնոլոգիայի տարրերի կիրառումը խաղային տեխնոլոգիաներում

Այս տիպի տեխնոլոգիայի էությունը ամփոփվում է ուսուցման անձնական կողմնորոշմամբ, ենթադրում է անձնական զարգացում, հնարավորություն է տալիս ինքնուրույն հասնել ինֆորմացիայի, ընդունում է ոչ ստանդարտ որոշումներ,

գտնում է տեղական, տարածքային և անգամ գլոբալ խնդիրների քաղաքակիրթ զարգացման ճանապարհ:

Աշակերտների գործունեության նախագծային տեխնոլոգիան աշխարհագրության դասերին տալիս է մեծ հնարավորություն անձնական շատ բաղադրիչների զարգացմանը՝ տրամաբանական գործունեության փորձ, ռացիոնալ մտածելու ոճ, զգացմունքային, տեսական և պրակտիկ գիտելիքներ՝ շրջապատող աշխարհից:

Դպրոցական աշխարհագրության բովանդակությունը ունի մեծ հնարավորություն ծրագրերում ընտրել նախագծային տեխնոլոգիան: Այդ պահանջները ենթադրում են, որ աշակերտները պետք է կարողանան կանխատեսել: Նախագծային տեխնոլոգիաները կարող են ապահովել աշակերտների պրոբլեմային-որոնողական ճանաչողության գործունեությունը, որն արտահայտվում է նախագծի ստեղծման գործընթացում:

Աշխարհագրության ուսուցման նախագծային տեխնոլոգիաների գործընթացում աշակերտները օգտվում են ատլասներից, աշխատանքային տետրերից, ուսուցման այլ միջոցներից: Աշխարհագրության նախագծային տեխնոլոգիաները նախընտրելի է կիրառել ցածր դասարաններում:

Այս տեխնոլոգիան կարող է հենքային դառնալ ողջ դասընթացի համար: Դրանք ունեն ակնհայտ առավելություններ՝ ապահովում են պատճառահետևանքային կապերի բացահայտումը, հնարավորություն են տալիս ներկայացնել երևույթը տարածության և ժամանակի մեջ, ձևավորում են աշխարհագրական մտածողություն: Աշակերտի մոտ դաստիարակում են գործարար և տնտեսվար որակներ:

Տեղեկատվական տեխնոլոգիայի ծրագրի կիրառումը խաղային տեխնոլոգիաներում

Այս տեխնոլոգիայի հիմքում ընկած է աջակցության միտքը, որը շատ լավ հայտնի է աշխարհագրության ուսուցիչներին: Նրանք աջակցության դասերին շատ են օգտագործում բանավոր խոսքը, գրաֆիկական պատկերները և քարտեզագրությունը:

Այդ տեխնոլոգիայի յուրահատկությունը ներառում է ուսումնական ինֆորմացիայի ծածկագրեր, հնարավորություն է տալիս ուսումնական նյութը բաժանել էտապների, ընդունել դպրոցականների ուսումնական գործունեության կազմակերպման տարբեր ձևեր, ցույց տալ ուսումնական նյութի ստեղծագործական արտահայտություններ՝ սիմվոլներում և նկարներում, կազմակերպել աշակերտների անհատական և տարբերակված աշխատանքներ: Տրամաբանական աջակցությունը թույլ է տալիս ուսուցչին անցկացնել ուսումնական նյութի կրկնություն, որը կրերի նրան, որ աշակերտը դասի նյութը լավ կյուրացնի:

Տեղեկատվական տեխնոլոգիայի ծրագրի կիրառումը խաղային տեխնոլոգիաներում, աշակերտներին հնարավորություն է տալիս դիտազննական պարագաների օգնությամբ ներկայացվող դասը ավելի լավ ըմբռնել, չէ որ զննականությունը ուսումնական գործընթացի արդյունավետության գրավականն է:

Հենարանային տրամաբանական սեղմագրի տեխնոլոգիայի տարրերի կիրառումը խաղային տեխնոլոգիաներում

ՀՏՍ-ի կամ հենարանային տրամաբանական ազդանշանների տեխնոլոգիայի հիմքում ընկած է աշակերտների աշխարհագրական մտածողության ձևավորումը: ՀՏՍ-ի տեխնոլոգիան հանդիսանում է խոսքի, գծապատկերների, նկարի, սիմվոլի, նշանի, սլաքի և այլնի տրամաբանական համադրություն, որում առանձնացվում է ուսումնասիրվող նյութի գլխավորն ու էականը, ակնառու է դառնում օբյեկտի ու երևույթի միջև պատճառահետևանքային կապը, ուսումնասիրվող նյութի մասերի միջև տրամաբանական կապը:

Աշխարհագրության դասերին կիրառվում են տարբեր հենքեր՝ խոսքային, նկարագրական, գրաֆիկական, քարտեզագրական: ՀՏՍ-ն ուսումնական ինֆորմացիայի կողմնորված ձև է: Այս տեխնոլոգիան ունի մի քանի առանձնահատկություններ.

1. Նյութը ուսումնասիրվում է փուլերով,
2. Սովորողների ուսումնական գործունեության կազմակերպման ձևերի բազմազանությունը,
3. Ուսումնական նյութի արտահայտման ինքնատիպ եղանակները՝ սիմվոլները և նկարները,
4. Անհատական և տարբերակված ուսուցման կազմակերպման հնարավորություն:

Տրամաբանական հենքերը հնարավորություն են տալիս ուսուցչին բազմակի և տարատեսակ եղանակներով կրկնություններ կազմակերպել, ինչը նպաստում է ուսումնական նյութի առավել լիարժեք ընկալմանն ու յուրացմանը:

ՀՏՍ-ն իր կառուցվածքով պետք է լինի յուրատիպ, որպեսզի երկար մտապահվի աշակերտի կողմից, այն պետք է սերտ կապված լինի դասագրքի նյութի հետ, համապատասխանի նրա շարադրման, տրամաբանական հերթականությանը: Դա կօգնի աշակերտին ավելի լավ հասկանալ նյութը, համադրել այն դասագրքի, ատլասի, քարտեզների և այլ միջոցների հետ:

Վերջին տարիներին այն սկսվեց համակարգված օգտագործվել ոչ միայն առանձին դասերին, այլ թեմաների և նույնիսկ դասընթացի կտրվածքով:

Այսպիսով, ՀՏՍ-ն նպաստում է պատճառահետևանքային կապերի բացահայտմանը, կատարելագործում է տրամաբանական մտածողությունը, դասի

Ժամանակ հնարավորություն է տալիս կատարել ինքնաստուգում և փոխադարձ վերահսկում: Ուստի այն նպատակահարմար է կիրառել նյութի և՛ ընկալման, և՛ ամրապնդման, և՛ ընդհանրացման փուլում:

Գիտելիքի ամբողջական յուրացման տեխնոլոգիան աշխարհագրության ուսուցման խաղային տեխնոլոգիայի համատեքստում

Այս տեխնոլոգիայի հիմքում ընկած է ուսուցման տարբերակումը: Բոլոր աշակերտները ունեն տարբեր հնարավորություններ, իսկ պետական ծրագրերը պահանջում են ուսուցման որոշակի քանակությամբ գիտելիքներ և հմտություններ բոլոր աշակերտների համար: Սրանից հետևում է, որ միակ չափանիշը ցանկացած կրթական համակարգի, դա ուսուցման պայմաններն են: Այս տեխնոլոգիայի առավելությունը այն է, որ նրա օգտագործման շրջանակը աշակերտները կարող են օգտագործել ցանկացած ձևով: Ստացված արդյունքները հստակ պայմաններ են ստեղծում կազմակերպելու աշակերտների ճանաչողական գործունեությունը և զարգացնում են նրանց ինքնակրթությունը: Այս տեխնոլոգիան չի հանդիսանում ուսուցման նպատակ, այլ միջոց աշակերտի զարգացման համար:

Տեխնոլոգիայի կիրառումը նպատակահարմար է սկսել 7-րդ դասարանից: Այն կիրառվում է նաև խմբային աշխատանքների կազմակերպման ժամանակ:

Աշխարհագրության դասերին առաջնորդվելով գիտելիքի ամբողջական յուրացման տեխնոլոգիայով, աշակերտներից յուրաքանչյուրը ուսուցման հավասար պայմաններում հնարավորություն ունի ցույց տալու իր գիտելիքները, քանի որ այս տեխնոլոգիան նվազեցնում է աշակերտների հոգեբանական և հուզական ծանրաբեռնվածությունը:

ԳԼՈՒԽ 2

ՆՈՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍԱՁԵՎԵՐԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Աշխարհագրության տեխնոլոգիական դասին ներկայացվող Ժամանակակից պահանջները

Ժամանակակից դասին նախ պետք է ուշադրություն դարձնել դասի նպատակի և շարժառիթի որոշմանը, որը բխում է ժամանակակից դիդակտիկայի դրույթներից: Դասի նպատակի և շարժառիթի որոշման պայմաններում պետք է առանձնացնել ոչ միայն գիտելիքի յուրացման և հմտությունների ձևավորման, մտավոր ունակությունների զարգացման խնդիրները, այլև ստեղծագործական գործունեության, փորձի և շրջակա աշխարհի վերաբերյալ հուզարժեքային վերաբերմունքի ձևավորման խնդիրը:

Հաջորդ տարբերությունը ուսուցչի դերի և գործառույթի փոփոխությունն է դասի շրջանակներում: Տվյալ դեպքում աշակերտը դիտվում է իբրև ուսուցման ինքնազարգացող սուբյեկտ, իսկ ուսուցիչը հանդես է գալիս իբրև ուսումնական գործունեության կազմակերպիչ: Ժամանակակից դասում կարևոր է սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեությունը, ուսումնական առաջադրանքների և խնդիրների ինքնուրույն լուծումը: Ավանդական դասի ընթացքում սովորաբար բացակայում է աշակերտների միջև շփումը, ժամանակակից դասում կիրառվում են խմբային աշխատանքային ձևեր, զույգերով աշխատանքներ, որոնք ենթադրում են շփում աշակերտների միջև:

Հաջորդ տարբերությունն աշակերտի և ուսուցչի փոխհարաբերությունների փոփոխությունն է՝ ի տարբերություն ավանդական դասի, ուր գերակշռում են ուսուցչի ավտորիտար ոճը, ժամանակակից դասում պետք է գերակայի համագործակցության մեթոդը:

Ուսուցման գործընթացի կառուցման տրամաբանության փոփոխությունը մյուս տարբերությունն է: Կարևոր տարբերություն է հանդիսանում յուրացված գիտելիքների կիրառումը նոր գիտելիք և կարողություն ձեռք բերելու համար: Ժամանակակից դասը կարող է կրել միջառարկայական բնույթ:

Վերը նշվածի հիման վրա կարելի է ձևակերպել աշխարհագրության ժամանակակից դասին ներկայացվող պահանջները՝

1. Ուսումնադաստիարակչական գործընթացի նպատակի որոշակիացում
2. Դասագրքի բովանդակությունը պետք է համապատասխանի ուսուցչի կողմից հաղորդվող նյութին, սակայն պարտադիր չէ նույնությամբ կրկնվի:
3. Նյութից կարևորի, առավել էականի ընտրությունը, որը թույլ կտա բացահայտել թեմայի էությունը:

4. Երկրամասնագիտական սկզբունքի իրականացումը ուսուցման գործընթացում
5. Ուսումնական նյութի արդիականությունը պետք է պայմանավորված լինի գիտության ժամանակակից տվյալների առկայությամբ:
6. Դասի էկոլոգիական ուղղվածությունը
7. Աշխարհագրության դասին ներկայացվող հիմնական պահանջը, դասի միասնականությունն է՝ տրամաբանական և դիդակտիկ առումով:
8. Աշակերտների տարիքային առանձնահատկությունների հաշվառումը

Աշակերտների իմացական գործունեության ակտիվացման ամենաարդյունավետ ճանապարհը պրոբլեմային իրավիճակի ստեղծումն է: Այն ստեղծվում է պրոբլեմային հարցերի միջոցով, որոնք հետաքրքրություն են առաջացնում և տալիս են մտածողությանը որոշակի ուղղվածություն: Սա ստիպում է աշակերտներին մտորել, առանձնացնել հիմնական և զլխավոր հատկանիշները:

Խաղային տեխնոլոգիայով կազմակերպված փորձարարական դասի մոդել՝ բլոկ-մոդուլային տեխնոլոգիայի կիրառմամբ

Բլոկային դաս

(9-րդ դասարանի Հայաստանի աշխարհագրություն)

Թեմա՝ Ագրոարդյունաբերական համալիր

Դաս՝ 40 Գյուղատնտեսությունը: Ընդհանուր բնութագիրը:

1. Դասի կրթական նպատակը՝ ծանոթացնել աշակերտներին գյուղատնտեսություն հասկացությանը և նրա ճյուղային կառուցվածքին:
2. Զարգացնող նպատակ՝ կարևորի ու երկրորդականի առանձնացում, հենարանային սեղմագրի կառուցում, վերլուծության, համադրության, եզրակացության կատարման կարողություն:
3. Դաստիարակչական նպատակ՝ էկոլոգիական դաստիարակություն, համակարգված գործողությունների մշակում, կարգապահություն, խմբում աշխատելու կարողություն, հարցի քննարկման կուլտուրա, փոխօգնություն, առողջ մրցակցություն:
4. Դասի գիտամեթոդական բովանդակությունը՝ գյուղատնտեսություն, գյուղատնտեսության ճյուղային կառուցվածք, զարգացման փուլեր, գիտատեխնիկական հեղափոխություն, բուսաբուծություն, անասնապահություն:

Դասի կազմակերպման ձևը՝ խմբային:

Դասի կահավորանքը՝ Աշխարհի քաղաքական քարտեզ, դպրոցական աշխարհագրական ատլասներ <<Աշխարհը և Հայաստանը>> (մեկական ատլաս յուրաքանչյուր սեղանին), աշխատանքային տետրեր:

Դասի մոդել

1 փուլ Բլից հարցում

3 փուլ Հարցում-ամրապնդում

2 փուլ Պլան-սխեմայի կառուցում

4 փուլ Ընդհանրացում

Մխեմա 1. Բրկ-մոդուլային դասի մոդել

1-ին փուլի բլից հարցումը նպատակ է հետապնդում կարճ և արագ առաջադրվող հարցերի միջոցով աշակերտներին ծանոթացնել դասանյութին: Հարցերի պատասխանները աշակերտները պետք է տեղում գտնեն դասագրքից և պատասխանեն:

Այս փուլի տևողությունն է 5-6 րոպե, իսկ աշակերտների պատասխանները գնահատվում է 0.5 միավոր:

2-րդ փուլի /պլան սխեմայի կառուցում/ նպատակն է գրել դասի սեղմագիրը՝ սխեմատիկ եղանակով նշելով բոլոր առանցքային հասկացությունները: Աշխատանքը կատարվում է գրատախտակի վրա ընդհանուր ուժերով, յուրաքանչյուր կես լրացնում է առանձին աշակերտ: Առանցքային հարցերը լրացուցիչ բացատրվում են ուսուցչի կողմից:

Փուլի տևողությունն է 8-10 րոպե, իսկ աշակերտների պատասխանները գնահատվում են 0.5 միավոր:

3-րդ փուլի նպատակն է հիմնավորել և ամբողջացնել նախորդ փուլերում ստացած գիտելիքները: Այն կատարվում է արդեն կազմված սխեմայի հիման վրա դասի վերջում զետեղված հարցերի միջոցով: Յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առավել հանգամանալից խոսում է առանձին աշակերտ:

Փուլի տևողությունը 8-10 րոպե, իսկ աշակերտների պատասխանները գնահատվում են 1-2 միավոր:

4-րդ փուլ՝ այն նախատեսված է ամփոփիչ ընդհանրացումներ, եզրակացություններ և հետևություններ կատարելու համար: Այստեղ զուգորդվում են հին ու նոր դասերը, այսինքն՝ ձևավորվում են նոր գաղափարներ՝ հենվելով անցած դասերից ձևավորված գիտելիքների վրա: Կարևոր է ընդգծել երկու դասերում տեղ գտած առանցքային հարցերի ընդհանրությունն ու տրամաբանական կապը:

Փուլի տևողությունն է 10-12 րոպե, իսկ աշակերտների պատասխանները գնահատվում են 3 միավոր:

Գնահատումը կատարվում է դասի վերջում բոլոր փուլերում հավաքած միավորների հիման վրա: Գնահատման այս ձևը զգոն է պահում աշակերտներին դասի ընթացքում, իսկ դասի դինամիկ և դյուրին ոճը զայթակղում է նույնիսկ ամենաթույլ աշակերտներին:

Այսքանով, դասը կարելի է համարել վերլուծված, աշակերտների կողմից բավականաչափ յուրացված:

7-րդ դասարան

Թեմա՝ Ագրոարդյունաբերական համալիր

1-ին փուլ

➡ Բլից հարցում

Հարց (ուսուցիչ)	Պատասխան (աշակերտ)
1. Ի՞նչ է արդյունաբերական համալիրը:	1. Գյուղատնտեսության և սննդի արդյունաբերության ամբողջությունը:
2. Ո՞րն է գյուղատնտեսության գլխավոր արտադրամիջոցը:	2. Հողը
3. Ի՞նչ ճյուղերից է կազմված գյուղատնտեսությունը:	3. Անասնապահություն, գյուղատնտեսություն
4. Ի՞նչ է հողային ֆոնդը:	4. Երկրի տարածքի ընդհանուր մակերեսն է՝ ցամաքային և ջրային:
5. Գյուղատնտեսության ի՞նչ նշանակության ճյուղեր կան/2/	5. Ճյուղեր, որոնք ունեն էքսպորտային նշանակություն: Ճյուղեր, որոնք ունեն տեղական օժանդակ նշանակություն:

2-րդ փուլ



Պլան-սխեմայի կառուցում

Արդյունաբերական համալիրի գլխավոր տարբերությունները նյութական արտադրության մյուս ճյուղերում:


Ագրոարդյունաբերական համալիր



- | |
|---|
| 1. Հենվում է բացառապես հողի՝ որպես գլխավոր արտադրամիջոցի և ջրային ռեսուրսների օգտագործման վրա: |
| 2. Ուղակի կախման մեջ է բույսերի ու կենդանիների վերարտադրության սեզոնային բնույթից և կենդանաբանական ցիկլից: |
| 3. Հողը, եթե այն որպես արտադրամիջոց ճիշտ է օգտագործվում, չի մաշվում ֆիզիկապես և բարոյապես, այն դառնում է ավելի բերրի: |
| 4. Համալիրի երկրորդ բաղադրիչը՝ սննդի արդյունաբերությունը բացարձակ կախման մեջ է գտնվում առաջին բաղադրիչից՝ գյուղատնտեսությունից: |
| 5. Գյուղատնտեսությունն ունի համատարած տեղաբաշխում և զբաղեցնում է ընդարձակ տարածություններ: |

Սխեմա 2.

Գծապատկեր 1.



3-

րդ փուլ Նյութի ամրապնդում

1. Որո՞նք են ագրոարդյունաբերական համալիրի գլխավոր բաղադրիչները:

2. Որո՞նք են գյուղատնտեսական արտադրության յուրահատկությունները: Ինչո՞վ է այն տարբերվում նյութական արտադրության մյուս ճյուղերից:
3. Բնութագրե՞ք ՀՀ գյուղատնտեսության անցած ուղին և վերլուծե՞ք դրա ներկայիս վիճակը:
4. Ինչո՞ւ է ՀՀ սակավահող երկիր համարվում:
5. Որո՞նք են գյուղատնտեսության մասնագիտացած և օժանդակ ճյուղերը /Էջ 86. Դաս ը ամ փո փո դ հ ար ց ե ր /

4-

րդ փուլ Նյութական փոփոխում

Հարց 1. Սննդի արդյունաբերությանը հատո՞ւյ է կախվածությունը գյուղատնտեսությունից/ ճիշտ պատասխանը ընդգծել/:

Պատասխան՝ Այո Ոչ

Հարց 2. Այժմ ՀՀ գյուղատնտեսությունը ինչպիսի ժամանակաշրջան է ապրում. / ճիշտ պատասխանը ընդգծել/:

Պատասխան՝ Անցման Լճացման

Հարց 3. ՀՀ գյուղատնտեսության գլխավոր ուղղություններից ո՞րն է գերակշռում / ճիշտ պատասխանը ընդգծել/:

Պատասխան՝ Անասնապահություն Բուսաբուծություն

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնախաղային տեխնոլոգիաների հետազոտության հիմնական արդյունքները կարելի է ամփոփել հետևյալ եզրակացությունների ձևով.

1. Դպրոցական կրթության նորացումը հնարավոր է մանկավարժական տեխնոլոգիաների բարելավման միջոցով:
2. Աշխարհագրության ուսուցման խաղային տեխնոլոգիան աշակերտներին սովորեցնում է զարգացման մակարդակ և ինքնուրույնություն, պահանջ կառուցվածքային բովանդակության, նյութերի կազմակերպման ձևի և ուսումնական գործընթացի մեթոդական ապահովում:
3. Աշխարհագրության խաղային տեխնոլոգիան ունի իր առավելությունները և թերությունները: Որոշակի պայմանների առկայության իրականացումը այդ տեխնոլոգիաներին տալիս է բարձր արդյունավետություն, իսկ մյուս դեպքերում նրանք կարող են քիչ արդյունավետ լինել, այդ դեպքում նպատակահարմար է փոխարինել այլ տեխնոլոգիայով:

Առավելություններ

1. Ուսումնախաղային տեխնոլոգիան հեշտացնում է նյութի ընկալումը և նվազագույնի հասցնում առարկայի նկատմամբ հիասթափության առաջացման հնարավորությունները:
2. Խաղային տեխնոլոգիաները կարող են հենքային դառնալ ողջ դասընթացի համար: Դրանք ունեն ակնհայտ առավելություններ՝ ապահովում են պատճառահետևանքային կապերի բացահայտումը, հնարավորություն են տալիս ներկայացնել երևույթը և ժամանակի մեջ, ձևավորում են աշխարհագրական մտածողություն: Աշակերտի մոտ դաստիարակում են գործարար և տնտեսվար որակներ:

Թերություններ

1. Չնայած, որ ուսումնախաղային տեխնոլոգիաները հրահանգների կարծրացած հավաքածու չեն, որոնք պետք է կատարվեն անվերապահորեն նշված ձևով, նրանք մշտապես ենթակա են մշակման ու կատարելագործման, սակայն խաղի կանոններին կամայական:
2. Խաղի նշանակությունը չի կարելի գնահատել միայն ժամանցային հնարավորություններով, դրանում էլ կայանում է իր հզորությունը, որն էլ աշակերտի համար ոչ միայն ժամանց ու հանգիստ է, այլ ունի նաև բարձր դիդակտիկական արժեք և նպաստում է մարդկային փոխհարաբերությունների ու սեփական գործունեության կազմակերպմանը:
3. Փորձարարական ակտիվացնող խաղային դասաձևերը խթանում են մտածողությանը և նպաստում հետաքրքրության խորացմանը:

4. Բացի իմացական և դաստիարակչական նշանակությունից, խաղային դասաձևերը նպաստում են աշխարհագրության առարկայի վարկանիշի բարձրացմանը և խթանում են հետաքրքրասիրությունը առարկայի նկատմամբ:

Այսպիսով աշակերտներին հետաքրքրում և գրավիչ կերպով կենտրոնացնում է այն գործունեությունը, որտեղ առավելագույնս ի հայտ են գալիս նրանց հնարամտությունը, մտավոր ակտիվությունը, պահեստային հոգևոր և ստեղծագործական ուժերը դրսևորելու կարողությունն ու հնարավորությունը: Մանավանդ, երբ այդ ամենը ընթանում է աշխույժ և ուրախ մրցակցային պայքարում: Այս իմաստով խաղային տեխնոլոգիայի կիրառումը աշխարհագրության գործընթացում նպատակահարմար է և անհրաժեշտ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սարգսյան Խ. Բ. , Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա, Երևան, «Զանգակ 97», 2002
2. Նազարյան Խ, Վալեայան Լ. , Հայաստանի աշխարհագրություն, 8-րդ դասարան, Երևան «Լույս» 1999
3. Մինասյան Ա. Ա. , Աշխարհագրության ուսուցման մեթոդներն ու միջոցները, Երևան-2011
4. Մինասյան Ա. Ա. , Փորձարարական դասաձևեր աշխարհագրությունառարկայից, Երևան-2011
5. Մանուկյան Մ.Մ. , Ուսուցչի անձնային և մասնագիտական որակները աշակերտական ինքնավարության պայմաններում, Երևան «Լույս» 1984
6. Համացանց
7. Душина И. В. Таможняя Е. А. Методика обучения географии в школе, М., Астрель, 2004
8. Душина И. В. Под ред. Методика обучения географии, М., Дрофа, 2007
9. Байбородова Л. М., Матвеева А. В., Обучение географии в средней школе. М., 2008
10. Митина Л. М., Психология труда и профессионального развития учителя, М., Академия, 2004
11. Мюнстерберг Г., Психология и учитель, М., ЛКИ 2007
12. Петрова Н.Н., Новенко Д. П., Настольная книга учителя географии, М., Эксмо, 2008

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻԶՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

“Հարավարևմտյան Ասիա” թեմայի դասավանդման առանձնահատկությունը աշխարհագրության
դասաժամերին : Հարավարևմտյան Ասիա

ԿԱՏԱՐՈՂ: Խաչաթյան Արաբայա Վրեժի

ՂԵԿԱՎԱՐ: Արմեն Ամիրխանյան

ՎԱՆԱԶՈՐ 2023

Ներածություն	2
Հարավարևմտյան Ասիա, կազմը, աշխարհագրական դիրքը, բնական պայմաններ և ռեսուրսները	3
Թեմայի դասավանդման առանձնահատկությունը	5
Տնտեսությունը	6
Բնակչությունը	8
Վերջապայույններ.	12
Գրականություն	14

Ներածություն

Հարավարևմտյան Ասիա, Արևմտյան Ասիա կամ Առաջավոր Ասիա տարածաշրջան Եվրասիա մայրցամաքում: Այն մարդկության պատմության հնագույն բնօրրաններից է և մի շարք ժողովրդների պատմական հայրենիքը: Մերձավոր Արևելք՝ անվանումով էլ հայտնի է: Գտնվում է Միջերկրական, Արաբական, Կարմիր, Սև և Կասպից ծովերի, Ադեհի, Օմանի, Պարսից ծոցերի միջև:

7 մլն կմ² տարածք է զբաղեցնում, որտեղ ապրում է 427 մլն 316 հազար մարդ (մոտավորապես): Ուրբանիզացման մակարդակն ավելի բարձր է, քան Հարավային ու Հարավարևելյան Ասիայում: Այստեղ զարգացման բարձր մակարդակով առանձնանում է Իսրայելը:

Բնությունը գեղեցիկ է, այստեղ տարածված են ավազային ընդարձակ անապատները, կիսանապատները ու օազիսները, իսկ դրանց հարևանությամբ՝ ձյունապատ լեռնագագաթները կանաչապատ գետահովիտներն ու ծովափները:

Հարավարևմտյան Ասիա, կազմը, աշխարհագրական դիրքը, բնական պայմաններ և ռեսուրսները

Հարավարևմտյան Ասիա, Արևմտյան Ասիա կամ Առաջավոր Ասիա տարածաշրջան Եվրասիա մայրցամաքում: Այն մարդկության պատմության հնագույն բնօրրաններից է և մի շարք ժողովուրդների պատմական հայրենիքը: Հայտնի է նաև որպես՝ Մերձավոր Արևելք: Գտնվում է Միջերկրական, Արաբական, Կարմիր, Սև և Կասպից ծովերի, Ադեհի, Օմանի, և Պարսից ծոցերի միջև: Տարածքը զբաղեցնում է շուրջ 7 միլիոն կմ², որտեղ ապրում է 427 մլն 316 հզ 135 մարդ: Հարավարևմտյան Ասիայում ուրբանիզացման մակարդակն ավելի բարձր է քան, օրինակ, Հարավային ու Հարավարևելյան Ասիայում: Սոցիալ-տնտեսական զարգացման բարձր մակարդակով առանձնանում է Իսրայելը: Այստեղ տարածված են ավազային ընդարձակ անապատները, կիսաանապատներն ու օազիսները, իսկ դրանց հարևանությամբ՝ ձյունապատ լեռնագագաթները, կանաչապատ գետահովիտներն ու ծովափերը:



Հարավարևմտյան Ասիայի բարենպաստ աշխարհագրական դիրքի, բնական ռեսուրսների պատճառով այստեղ բախվում են խոշորագույն պետությունների շահերը, որի հետևանքով այստեղ շարունակ չեն դադարում պատերազմները (կապ ֆալաֆականության հետ):

Առանձնահատուկ տարածաշրջան է այն առումով, որ այստեղ գտնվող բոլոր պետությունները տարբերվում են իրարից:

Տարածաբջջանի պետություններն իրարից տարբերվում են պետական կարգով :

Կառավարման ձևով տարածաբջջանի երկրներից 7–ը միապետություններ են, որոնցից 3–ը՝ բացարձակ (Սաուդյան Արաբիա, Քաթար, Օման): Տարածաբջջանի երկրների մեծ մասը հանրապետություններ են: Մեկ բնակիչին ընկնող Հ.Ն.Ա.–ի ծավալով առաջատարն են նաև նավթ արտահանվող երկրները:

Սոցիալ – տնտեսական զարգացման բարձր մակարդակով առանձնանում է Իսրայելը: Մեկ բնակիչին ընկնող Հ.Ն.Ա.–ի ծավալով առաջատարն են նաև նավթ արտահանվող երկրները: Այս տարածաբջջանում հաճախակի են երկրաշարժերը, կան գործող հրաբուխներ՝ Նեմրուքը, Թունդրակը, Դեմավենդը:

Ջրի հիմնախնդիրը շատ կարևոր է, քանի որ տարածաբջջանի 3/5ը զբաղեցնում են լեռները և ավազա, քարաքարտ անապատները: Ջրային կլիմայի պատճառով գետային ցանցը թույլ է զարգացած: Տնտեսական կարևոր նշանակություն ունեն Եփրատը, Տիգրանը, Կուրը և Արաբսը, որոնք Հայկական լեռնաշխարհի ձյունապատ լեռների ծնունդ են:

Տարածաբջջանի լները սակավ են և գլխավորապես՝ աղի: Դրանցից աշխարհի ամենազգեցիկ Մեռյալ ծով–լիճը հարուստ է քիմիական՝ կալիումական հումքով, Վանա լիճը՝ բորակով և յուրահատուկ տառեխ ձկնատեսակով, Ուրմիան՝ գանգան աղերով: Մեռյալ ծովի և Ուրմիայի ջրերը ունեն բուժիչ նշանակություն: Վանա լիճն օգտագործվում է նաև նավարկության համար:

Բուսկանությամբ հարուստ են հիմնականում ծովափնյա շրջանները, որոնք զբոսաբջջության համար կարևոր նշանակություն ունեն: Բնակչության հատուկ է գաղթը, կյանքի միջին միջին տևողությունը բարձր է: Բնակչության մեծ մասը մահմեդական է:

Այս տարածաբջջանի երկրների մեծ մասի տնտեսությունը հենվում է գյուղատնտեսության և հանքային ռեսուրսների օգտագործման վրա: Արդյունաբերական առաջընթացը բնորոշ է Իսրայելին, Թուրքիային, նավթ արդյունահանող երկրներին: Տարածաբջջանում գործող միակ ատոմակայանը Հայաստանում է:

Հարավարևմտյան Ասիայում զարգացած են արհեստները ազգային, գյուղատնտեսությունը, բուսաբուծությունը (նուռ, բուգ, ձիթապտուղ, ծիրան, ցիտրուս, խաղող) (պտղաբուծությունը, անասնապահությունը, ոչխարաբուծությունը):

Տարածաբջջանում բարձր է խողովակաշարյին տրանսպորտի զարգացումը. Կարևոր է ծովային տրանսպորտը: Զբոսաբջջությունը զարգացած է Կիպրոսում, Թուրքիայում, Լիբանանում, Սաուդյան Արաբիայում:

Հարավարևմտյան Ասիայում են անցնում Եվրոպան և Աֆրիկան Ասիային կապող հաղորդակցության գլխավոր ուղիները: Դա նրա տնտեսաաշխարհագրական դիրքի կարևոր առանձնահատկությունն է, որը մեծ ազդեցություն է թողնում տարածաբջջանի երկրների սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման վրա:

Հնարավոր է այս տարածաբջջանում, որը եռացող կաթսա է աշխարհում, առաջիկայում գործ ունենանք նոր ֆիզիկական ու քաղաքական փարեզների հետ, դրանից բխող բուլսը հետևանքներով :

Տարածաբանի բնութե և հնագույն, երբեմն՝ հագարամյա պատմություն ունեցող ֆաղափները՝
Երուսաղէմը, Երևանը, Բէյրութը, Դամասկոսը: Դրանց կողքին կան երիտասարդ՝ անցյալ դարի կեսին ծնունդ
առած ֆաղափները (Մանամա, Դոհա), որոնք նավթարդյունաբերական զարգացման արդյունք են:

Թեմայի դասավանդման առանձնահատկությունը

Անցնում են 2 դասաժամով: Թեման բաժանում են ենթաթեմաների:

1. Տնտեսությունը
2. Բնակչությունը

Նախ առակերտներին տալիս են երկրների ուրվագծերը՝ ներկած տարբեր գույներով և յուրաքանչյուր երկիր տեղադրում են իր տեղը՝ ստանալով լիարժեք աշխարհագրական տեպ: Առանձնացնում են մեր երկիրը՝ Հայաստանը, կապ են Կասպիական ծովի առափնյայի հետ, հայրենիքի թեմայով բանաստեղծություններ են հիշում, կապ են ասեղծում պատմության առափնյայի հետ, ամենահին երկրներն ու նրանց հետ թեմայի կամ բարեկամ լինելն են առանձնացնում:




Տնտեսությունը

Դասախոսությունն ներկայացնում էմ Եվրոպան և Աֆրիկան Ասիային կապող հաղորդակցության գլխավոր ուղիները: Խոսում ենտարածաբանի բարենպաստ աշխարհագրական դիրքի, հարուստ հանքային ռեսուրսների (հատկապես նավթի) պատճառով այստեղ առավել սուր ձևով են բախվում աշխարհի խոշորագույն պետությունների շահերը: Սուր հակասություններն են ներկայացնում Հարավարևմտյան Ասիայի պետությունների միջև, ինչի պատճառով այն դարձել է աշխարհի ամենաանկայուն տարածաբաններից մեկը:

Տարածաբանի պետություններն իրարից տարբերվում են պետական կարգով և սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով T-աձև աղյուսակով առանձնացնում ենք աշակերտների հետ միապետություններն և հանրապետությունները: Քարտեզից կտրտած հատվածները առանձնացնում ու տեղադրում :

Առանձնացնում են Իսրայելը՝ որպես սոցիալ-տնտեսական զարգացման բարձր մակարդակ ունեցող երկիր: Յուրաքանչյուր աշակերտ դառնում է պետություն (ուրվագիծը կպցրած է կրճֆին) ներկայացնում այդ պետության բնական պայմանները ու ռեսուրսները: Ուրվագծերի վրա գույներով առանձնացնում ենք անապատները, կիսաանապատներն ու օազիսները, ձյունապատ լեռնագագաթները, կանաչապատ գետահովիթներն ու ծովափները: Այստեղ է կենտրոնացված նավթի հիմնական համաաշխարհային պաշարների 2/3-ը, որը տարածաբանի երկրներից մեծ մասի եկամտի գլխավոր աղբյուրն է: Նավթով հարուստ երկրները առանձնացնում է մի աշակերտ, գագավ հարուստ երկրները մի ուրիշը, բրոմի հումքի համաաշխարհային նշանակության պաշարները երրորդը, կալիումական աղերը՝ չորրորդը: Համապատասխան նշանները աշակերտները ամրացնում են քարտեզին:

Зарубежная Азия. Минеральные ресурсы



Չոր ու ցամաքային կլիմայի մասին բնանկար–տեսանյութ են դիտում, Սև ծովի և Հարավկասպիական տեղամասերում մասին նույնպես: Սովորողները ուղղման ջրի անհրաժեշտության մասին են խոսում:

Արդիական խնդիր է ջրի հիմնախնդիրը: Սովորողները շարադրանք են գրում 10 րոպեանոց <<Չուրը կյանքի աղբյուր>>թեմայով: Ինֆնագնահատում և աշխատանքների վերլուծություն է կատարվում:

Տարածաբջջանի պատմամեակությանի և հարտարապետական հուշարձանների,ինչպես նաև միջերկրածովային հրաբազեղ լողափերի, հանգստի և գրոսաբջջության վայրերի մասին տեսանյութ հանձնարարում են ըստ նախապիրության կազմեն առկերտները:


Բնակչությունը

Հարավարևմտյան Ասիայում ապրում է 340 մլն մարդ, որի 43%-ը՝ Իրանում և Թուրքիայում: Բնակչության թվով տարածաշրջանի խոշոր երկրներից են նաև Ադվանստանը, Սիրիան, Իրաքը, Սաուդյան Արաբիան և Եմենը: Բնակչություն բնական աճը աշխարհի միջին ցուցանիշներից համեմատաբար բարձր է: Դրա վրա ազդում են ազգային կրոնական սովորույթները:

Բնակչության բնական աճը ներկայացնում ենք **Մ**-աձև աղյուսակով:

Երկիր	Կրոնական կազմը	Սոցիալ—տնտեսական պայմաններ
Հայաստան	Քրիստոնեություն	Միջին
Վրաստան	Քրիստոնեություն	Միջին
Իսրաել	հուդայականություն	Բարձր


Բանավեճի կազմակերպում ներգաղթ—արտագաղթ թեմայով՝ պատճառների և հետևանքների մասին: Գերակշռում են տղամարդիկ Քաթարում, Քուվեյթում, Արաբական Միացյալ Էմիրությունները: Բնակչությունը պատկանում է եվրոպոիդ ռասային: Կապ է հաստատվում պատմության դիվանագիտության հետ՝ հայ—ադրբեջանական, հայ—թուրքական, իսրայելա—արաբական և այլ խնդիրների թեմայով:



Ուրբանիզացման մակարդակի համեմատում

Հարավարևմտյան Ասիա	Աֆրիկա	Հարավարևելյան Ասիա
64,8%	66 %	34 %

Էֆսկուրսիա–ծանոթությւն ֆաղաֆների հետ, (տեսանույթ). Կարն դասախոսություն գյուղերի մասին: Ասիայի և Փուրֆիայի հայկական համայնքների մասին: Տարածաշրջանը՝ որպես մարդկային ֆաղաֆակրթության հնագույն բնօրրաններից (Բաբելոն, Ասորեստան) ինֆնատիպ մշակույթի մասին: Պետությունների տնտեսական զարգացման աստիճանները



Որպես զարգացած երկրների Իսրայելը և Թուրքիան համեմատում: Վեճի դիագրամում Կարն դասախոսություն Հարավարևմտյան Ասիայի արդյունաբերության, անասնապահության, ավտոմոբիլային տրանսպորտի, տարածաշրջանի երկաթուղային կապի, ծովային տրանսպորտի, խողովակաշարային տրանսպորտի զարգացման, տնտեսական կապերի բոլոր ձևերի մասին: Անդրադարձ դասին հարցադրումով:

Իսրայել

Իսրայելը հայտնի է ռազմաարդյունաբերությամբ նաև համաշխարհային շուկայում որպես արտահանող:
Զարգացած է մեքենաների, սարքավորումների արտադրությամբ, ադամանդի արտադրությամբ, տեխնոլոգիաների արտադրությամբ:
Գյուղատնտեսության մեջ զարգացած է ձիթատու մշակաբույսերի, մսի, սուրճի, կակաոյի արտադրությամբ:
Հ.Ն.Ա 405 միլիարդ դոլար է

Հարավարևմտյան Ասիայի ամենազարգացած երկրներն են:
Զարգացած է արդյունաբերությունը գյուղատնտեսությունը:
Գյուղատնտեսության մեջ աչքի են ընկնում ցիտրուսների և ծխախոտի արտադրությամբ:

Զարգացած է սև և գունավոր մետաղաձուլությունը:
Մեքենաշինությունը ամենաարագ զարգացող ճյուղերից է: Ավանդական ճյուղերից է թեթև և սննդի արտադրությունը:
Մեծ համբավ է վայելում ծխախոտի <<Սամսուն>> և <<Տրապիզոն>> տեսակները:
Ոչխարների և այծերի գլխաքանակով աշխարհում առաջին տեղն է զբաղեցնում:
Հ.Ն.Ա 815 միլիարդ դոլար է:

Թուրքիա

Վերջարդյունքներ.

Գլխարդանան իրենց բառերով կամ գրքի բառերով պատմել Հարավարևմտյան Ասիայի երկրների բնակչության և տնտեսության մասին: Համադրել և հակադրել, առանձնացնել նմանություններն ու տարբերությունները: Խոսեն բնակչության կազմի, ներգաղթի ու արտագաղթի մասին, ազգային բազմազանության մասին:

Ներկայացնեն տարածաբանը որպես ազգամիջյան բախումների օջախ:

Կարողանան ընկալել և ներկայացնել կրոնի դերը տնտեսական և քաղաքական կյանքում:

Ընկալեն և մեկնաբանեն ռեսուրսահանածո,ուրբանիզացում բառերը:

Լեզվական հմտություններ ձեռք բերեն Ա.Մ.Է, Հ.Հ Հ.Ն.Ա., հաղավումները բացելու:

Ամբողջական պատկերը, դասի նպատակ:

- սովորողները կներկայացնեն Հարավարևմտյան Ասիայի աշխարհագրական դիրքը:
- կբացատրեն ջրի նավթի նշանակությունը տարածաբանի համար:
- կգնահատեն տարածաբանի բնական պայմանները և ռեսուրսները՝ տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման հնարավորությունների տեսանկյունից
- միմյանց հետ համագործակցելով կպատրաստվեն նյութեր Հարավարևմտյան Ասիայի պատմամշակութային և հարտարապետական հուշարձանների վերաբերյալ
- կխոսեն տարածաբանի <<թեժ>>կետերի մասին
- կպատրաստեն սլայդ ներկայացում <<Անապատը և մարդը>> թեմայով:
- միջառարկայական կապերի ամրապնդում և ուսուցման արդյունավետություն
- Հետազոտական աշխատանքի միջոցով տարբեր երկրների տնտեսության համեմատում և հակադրում, արդիական խնդիրների վերաբերյալ ֆնարկում <<Տարածությունը խաղաղության ու պատերազմի մեջ>> և այլն:
- կիմանա Հարավարևմտյան Ասիայի բնակչության բարձր աճի պատճառները
- կբնութագրեն բնակչության ազգային ու կրոնական կազմը
- կնկարագրեն տարածաբանի բնակչության տեղաբաշխումը,
- կիմանա տարածաբանի հակամարտությունների պատճառները,
- կգնահատեն ու կկարեկտրեն հայերի և տարածաբանի մյուս ժողովրդների ավանդը մարդկային քաղաքակրթության մեջ,
- կձևավորեն սովորելու կարողությունը,
- կգնահատեն Հարավարևմտյան Ասիայի տեղը աշխատանքի միջազգային բաժանման մեջ,
- կառանձնացնեն արդյունաբերության բնորոշ գծերը,
- ձեռք կբերեն լեզվական գիտելիքները,կսովորեն հատուկ անուններ և դրանց ուղղագրությունը,

- կգարգացնեն համադրելու և համադրելու կարողություններ
- կդասակարգեն պետություններն ըստ տնտեսական զարգացման
- ցույց կտան արդարության բնորոշ գծերը
- կգնահատեն նավթի ու մյուս հանածոների նշանակությունը տարածաշրջանի տնտեսության համար
- կներկայացնեն գյուղատնտեսության յուրահատուկ գծերը,
- կհամեմատեն պետությունները միմյանց հետ, կհամդրեն կգտնեն նմանություններ և տարբերությունները,
- միմյանց կլսեն, կընկալեն, ընկերոջ միտքը կլսեն, կարժևորեն, միմյանց ընկալելու հմտություն ձեռք կբերեն:

Գրականություն

1. Աշխարհագրարության ընթացիկ գնահատման առաջադրանքների նմուշների ժողովածու: Երևան 2007
2. Աշխարհագրություն. Ուսուցիչների 5-օրյա վերապատրաստումների պլան և նյութեր: Երևան 2007
3. Աշխարհագրություն. Ուսուցիչների վերապատրաստման ձեռնարկ: Ընթացիկ գնահատման մեթոդաբանություն: Երևան 2009
4. 8 դասարանի Աշխարհագրության դասագիրք: Մանասյան Մ.Գ., Մարգարյան Ռ.Գ., Յովսեփյան Ա.Ա., Յովհաննիսյան Գ.ժ.
5. https://hy.m.wikipedia.org/wiki/Հարավարևելյան_Ասիա

**ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ**



**ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

- ԹԵՄԱ՝** Վերականգնվող էներգետիկա թեմայի դասավանդման մոտեցումները:
- ԿԱՏԱՐՈՂ՝** Հովհաննիսյան Գոհարիկ
- ՂԵԿԱՎԱՐ՝** Ամիրխանյան Արմեն


Ներածություն

Վառելիքաէներգետիկ արդյունաբերությունը կամ էներգետիկան արդյունաբերության բազային ճյուղերից է: Այն վառելիքի տարբեր տեսակներ ու էլեկտրաէներգիա է մատակարարում տնտեսության տարբեր ճյուղերին, ինչպես նաև հումք արդյունաբերության որոշ ճյուղերի: Չնայած որ այս ոլորտում դեռևս մեծ է ավանդական էներգիայի աղբյուրների կշիռը, բայց գնալով այն պակասում է համախառն ցուցանիշներում և ավելանում է վերականգնվող էներգիայի բաժինը: Դրանք են քամու, օվկիանոսային ալեբախության, երկրաջերմային, արևի և այլ աղբյուրներից ստացվող էներգիան: Քանի որ Հայաստանի Հանրապետությունը չունի սեփական էներգակիրներ և կախում ունի արտաքին շուկաներից ու հաղորդակցության ուղիներից մեր երկրի համար կարևոր է որ այս ոլորտը արագ զարգանա ու սրա տեսակարար կշիռը հնարավորինս մեծ լինի ամբողջ էներգետիկայի մեջ: Քանի որ այսօրվա աշակերտը վաղը որոշումներ ընդունող քաղաքացի է դառնալու, շատ կարևոր է, որ նա այս տարիքից գիտակցի այս ոլորտի կարևորությունը մեր երկրի էներգետիկ անկախության գործում: Այս թեման ուսումնասիրվում է 7-րդ և 11-րդ դասարանների աշխարհագրության դասընթացներում: Քանի որ թեման կապված է նաև ֆիզիկայի ու ինչ որ չափով նաև քիմիայի հետ ապա հնարավորություն կա այս առակաների հետ համատեղ պլանավորել ու իրականացնել նախագծային աշխատանքներ կամ այլ միջոցառումներ, որը կխթանի աշակերտների համագործակցային հմտությունները և կօգնի թեման պատկերացնել ոչ միայն մեկ առարկայի շրջանակներում:

Ի՞նչ է վերականգնվող էներգետիկան:

Վերականգնվող էներգիա է համարվում այն էներգիան, որը ստացվում է բնական այն պրոցեսներից, որոնք կարող են շարունակվել տևական ժամանակ առանց ռեսուրսների սպառման: Դրանք կոչվում են վերականգնվող, քանի որ դրանց համար անհրաժեշտ ռեսուրսները բնության մեջ վերականգնվում են և ապահովում էներգիայի կայուն մուտքեր: Երբեմն օգտագործում են նաև կանաչ էներգիա արտահայտությունը, քանի որ սրա ստացման և/կամ օգտագործման ժամանակ նվազագույն վնաս է հասցվում շրջակա միջավայրին: Բացի դրական կողմերը անհրաժեշտ է նշել նաև այս ոլորտի որոշ թերություններ: Օրինակ ըստ գերմանական աղբյուրների էներգիայի ստացման վերականգնվող աղբյուրները չնայած տալիս են ամբողջ էներգիայի մոտ 52 տոկոսը բայց ունեն անկայուն ռեժիմ: Օրինակ հունվարին ու փետրվարին այս եղանակով ավելի քիչ էներգիա է ստացվում քան մնացած ամիսներին: Իսկ օրինակ մայիսին ու հուլիսին համապատասխանաբար 57 և 59 տոկոս: Այս՝ 2023 տարվա կտրվածքով գերմանական ֆոտովոլտաիկան արտադրել է ռեկորդային 9,8 միլիարդ կիլովատ ժամ էլեկտրաէներգիա, որը 16 տոկոսով ավել է քան անցյալ տարվա նույն ժամանակամիջոցում: Իսկ ամբողջ էներգիան, որը ստացվել է վերականգնվող աղբյուրներից արտադրել է այս տարի 199 միլիարդ կիլովատ ժամ էլեկտրաէներգիա անցյալ տարվա 192,5-ի փոխարեն: Որպեսզի համեմատենք այս թվերը հանածո վառելիքից ստացվող էլեկտրաէներգիայի հետ նշենք որ հանածո վառելիքից ստացվել է անցյալ տարվա 237 միլիարդ կիլովատ ժամից մինչև այս տարվա 174 կվտ ժամ: Բայց նույն գերմանիայի օրինակում կարելի է տեսնել, որ ավելի շատ էլեկտրաէներգիա արտադրում են ցամաքում տեղադրված հողմաէլեկտրակայանները՝ 6 ամսում 78 միլիարդ կվտ ժամ: Երկրորդը ֆոտովոլտաիկան է 56 միլիարդ ցուցանիշով և երրորդը կենսազանգվածից ստացվող էներգիան 33 միլիարդ ցուցանիշով: Չորրորդ տեղում ծովային քամիներից ստացվող էներգիան է 16 միլիարդ ցուցանիշով: Հասկանալի պատճառով այս վերջինը ՀՀ-ում կիրառելի չէ, բայց առաջին 3-ի օրինակը կարելի է օգտագործել նաև Հայաստանի Հանրապետությունում: ԳԴՀ-ի դեպքում հնչում է կարծիք, որ մինչև 2030 թվականը ընդհանուր թիվը կհասնի 215 գիգավատի որը կլինի ամբողջ էլեկտրաէներգիայի մոտ 80 տոկոսը, քանի որ հավելաձև կազմում է մոտ 5 տոկոս:

Այժմ քննարկենք դրանց մի քանի տեսակներ



Արեգակնային էներգիա

Արեգակնային էներգիան էլեկտրականի վերածելու համար գիտնականները ստեղծել են արեգակնային մարտկոցներ, որոնք բաղկացած են բազմաթիվ լուսաէլեկտրական բջիջներից: Յուրաքանչյուր բջիջ կազմված է աննշան քիմիական խառնուրդներ պարունակող սիլիցիումի շերտերից: Երբ այդպիսի բջիջի վրա ընկնում է արեգակնային լույսը, էլեկտրոնները սիլիցիումի մի շերտից տեղափոխվում են մյուսը՝ առաջացնելով էլեկտրական հոսանք: Արեգակնային էներգիայի տարեկան հոսքը մթնոլորտի ստորին շերտում եւ Երկրի մակերեսույթի վրա չափվում է այնպիսի մեծությամբ (10^{14} ԿՎՏ), որը տասնյակ անգամ գերազանցում է հանքային վառելանյութի հետախուզված պաշարների ամբողջ էներգիային և հազար անգամ համաշխարհային էներգասպառման ներկա պաշարներին:

Յուրաքանչյուր 20 րոպեի ընթացում երկրին հասնող արևային էներգիայի քանակը հավասար է էներգիա սպառող հիմնական երկրների մեկ տարվա ընթացքում օգտագործած հանածո վառելանյութից ստացված էներգիային: Երկիր հասած էներգիայի մեծ մասը կլանում մ է Երկրի մակերույթը, փոխանցում է ծովերի լճերի եւ գետերի ջրերին, արդեն նաեւ բույսերին Մի փոքր մասը քամիների, ալիքների առաջացման պատճառ է դառնում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ այեցակային էներգիան հսկայական ու անսպառ ռեսուրս է, ինչպես նաեւ այն հանգամանքը, որ էկոլոգիապես ավելիմաքուր է 20-րդ դարի երկրորդ կեսից սկսած մարդիկ սկսեցին մեթոդներ մշակել որպեսզի արեգակնային էներգիան փոխակերպեն էլեկտրական էներգիայի: Արեւային էներգիան կարող է ձևափոխվել էլեկտրաէներգիայի, ինչպես նաեւ ջերմային եւ այլ տեսակի էներգիաների: Արևային ջերմությունից այլ տեսակի էներգիաների ստացման տեխնոլոգիաները բազմաթիվ են: Օրինակ էլեկտրաէներգիա ստացվում է արեգակնային լուսաէլեկտրական(ֆոտովոլտային) մոդուլների(պանելների) միջոցով, արեգակնային ճառագայթումը անմիջականորեն էլեկտրական էներգիայի փոխակերպելով:

Աշխարհում գործում են խոշոր արևային ֆոտովոլտիկ էլեկտրակայաններ, որոնց հզորությունը կարող է հասնել 20 ՄՎտ-ի: Ներկայումս նախագծվում են նաեւ 1000ՄՎտ հզորության կայաններ

Այսօր գիտաֆանտաստիկ մշակումների փուլից մարդկությունն արդեն անցում է կատարել դրանց գործնական իրականացման փուլին: Օրինակ, Գերմանիայում Գելզենկիրխեն քաղաքում կառուցվում է մարտկոցների արտադրության աշխարհում ամենախոշոր գործարանը: Հանրահայտ «Սիմենս» կորպորացիան միավորվել է «Արկո Սոլար» ֆիրմայի հետ եւ թողարկում է արեգակնային էներգիան փոխակերպող «Սիմենս Սոլար» մակնիշի սարքավորում: «Սոլարեքս» ֆիրման ԱՄՆ-ի հայտնի Մանվան Հովտում (Նեւադա նահանգ) սկսել 100ՄՎտ հզորության էլեկտրակայանի շինարարությունը:


Նյու Յորքի Մանհեթեն թաղամասի երկնաքեր շենքերից մեկի 13 ամենաբարձր հարկերը երասապատված են այնպիսի սալիկներով, որոնք արեգակնային էներգիան փոխակերպում են էլեկտրականի, որն էլ օգտագործվում է շենքի տաքացման, կոնդիցիոներների, վեճնտիլիատորների եւ լուսավորման նպատակներով

Արեգակնային էներգիայի հսկայական ռեսուրսները լայնորեն օգտագործելու խոչընդոտող հանգամանքը արեգակնային էներգիան փոխակերպող սարքավորումների դեռևս բարձր ինքնարժեքն է: Այդ սարքեր թանկարժեք են, իսկ արտադրած էլեկտրաէներգիայի ինքնարժեքը՝ բարձր

Արեգակնային ֆոտովոլտայիկ կայանի ներդրումային նախսերը 1 կՎտ-ի համար բավականին թանկ են, կախված էներգիայի ստացման տեխնոլոգիաներից կարող են տատանվել \$2500-5200 սահմաններում: Օրինակ, վերջերս Իսրայելում 2 ՄՎտ հզորության արեւային ֆոտովոլտայիկ կայան կառուցելու համար ներդրումները կազմել են 85 մլն ԱՄՆ դոլլար: Իսկ կենտրոնացված արեւային ջերմային կայանների համար ծախսերը կարող են տատանվել 1 կՎտ-ի համար \$4000-6000 սահմաններում

Մեկ ընտանիքին լուսավորությամբ, ռադիոյի եւ հեռուստացույցի համար անրաժեշտ հոսանքով՝ ապահովելու համար բավարար է 0.5մ մակերեսով արեգակնային մոդուլ ֆոտոէլեկտրական փոխակերպիչ: Այդպիսի մոդուլները առավելապես տեղադրվում ին արևադարձային գոտու երկրներում, որտեղ երկար է արեգակնային ճառագայթման տարեկան տեւողությունը(տարեկան մոտ 300 օր արեւոտ է լինում եւ թույլ է զարգացած: Այսօր շատ չնչին է արեգակնային էներգիայի դերը համաշխարհային էներգետիկ համակարգում՝ կազմելով ընդամենը 0.1%: Արևային կայանները առաջին անգամ ստեղծվել են 1980 ական թվականներին: Առաջինը եղել է Կալիֆորնիայում: Այսօր արեւային էներգիայի արտադրության ոլորտում աշխարհի առաջատար երկրներն են՝ ԱՄՆ-ը, Իսպանիան, Չինաստանը, Գերմանիան, Իտալիան, Հնդկաստանը: Աշխարհի ամենահզոր էլեկտրակայանը գտնվում է Հնդկաստանում: Արեւային էներգիան լայն կիրառություն ունի Իսրայելում: Այս երկրում գտնվող բազաիարկ շենքերի մոտ 95%-ը ջուր տաքացնելու համար կիրառում են հատուկ արեւային տաքացուցիչներ, ինչը հանգեցնում է մոտ 4% էներգախնայողության ամբողջ երկրի մասշտաբով: Նմանատիպ սարքավորումներ Չինաստանում կիրառում է շուրջ 60 մլն ընտանիք: Հայաստանում այս ոլորտը դեռ զարգացման փուլում է: Արդեն գործում են արեւի էներգիայով աշխատող առաջին փոքր հզորության էլեկտրակայանները: Հայաստանում արեւային էներգետիկայով զբաղվում են «ՍոլարԷն» ՍՊԸ-ն, Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի «Հելիոտեխնիկա» լաբորատորիան, «ՎիաՍոլար», «Տեխնոկոմ»/«Սան Էներջի» ընկերությունները: «ՍոլարԷն» ընկերությունը մասնագիտացած է արեւային ջրատաքացուցիչների արտադրության ոլորտում, չնայած նաեւ ֆոտոէլեկտրական կայանների տեղադրման աշխատանքներ է տանում: «Տեխնոկոմ»/«Սան Էներջի» ընկերությունը նույնպես մասնագիտացած է արեւային ջրատաքացուցիչների արտադրության եւ դրանց տեղակայման ոլորտում: Արեւային ֆոտոէլեկտրական մարտկոցների արտադրությամբ զբաղվող ընկերություն Հայաստանում դեռևս գոյություն չունի: Սակայն Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի «Հելիոտեխնիկա» լաբորատորիայում, դեռևս 1993-ից սկսած, աշխատանքներ են տարվում արեւային ֆոտոէլեկտրական մոդուլների մշակման եւ դրանց տեղակայման ուղղությամբ, որոնք հիմնականում ունեն փորձնական նպատակ: «ՎիաՍոլար» ընկերությունը 2006թ. տեղակայել է ջրիան համակարգով արեւային էլեկտրական վերափոխիչ, որն առաջինն է Հայաստանում եւ առայժմ միակը տարածաշրջանում: Արեւից ստացվող էներգիան վերականգնելի է եւ մաքուր: Սակայն արեւի բացակայությանը գիշերային, երբեմն էլ ցերեկային ժամերին, կախվածությունը տարվա եղանակից խոչընդոտում են նրա արդյունավետ օգտագործումը: Բացի այդ արեւի էներգիան իարժեք

օգտագործելու համար անհրաժեշտ է կուտակել, իսկ կուտակելու համար մեծածավալ սարքավորումներ են պահանջվում: Որքան մեծ է կուտաքվելիք էներգիայի պաշարը, այնքան մեծածավալ կուտակիչներ են անհրաժեշտ:




Հողմաէներգետիկա

Հողմաէլեկտրակայանը քանու էներգիան էլեկտրականի վերածող իրար միացած բազմաթիվ հողատուրբինների համալիր է: Առավել չափով քանու էներգիա ստանալու նպատակով հողատուրբիններն ունեն հսկայական թելեր: Հատուկ սարքերով ղեկավարվող մեխանիզմները որոշում են քանու ուղղությունը եւ հողատուրբինների թելերը շրջում այդ ուղղությամբ: Երկրի մակերեսային անահամաչափ տաքացումը, բարդ ռելիեֆը, ջրային ավազանների ու ցամաքային տարածությունների տարբեր ջերմունակությունները առաջացնում են մթնոլորտային տարբեր ճնշման մարզեր (բարձր եւ ցածր): Ճնշումների տարբերություններից ելնելով երկրագնդի վրա առաջանում են քամիներ: Քանու էներգիան կարող է վերածվել էլեկտրաէներգիայի: Հատկապես կարելու է հեռավոր այն տարածաշրջանների համար, որոնք միացված չեն էլեկտրականության ընդհանուր ցանցին: Հողմակայանների դրական կողմերից մեկն էլ այն է, որ սպառողը համեմատաբար անկախ է: Հողմային էներգիան, որը դարեր շարունակ մարդն օգտագործել է աղացներում եւ նավագնացության մեջ, գործնականում անսպառ է: Այն անհամեմատ էժան է, չի աղտոտում շրջակա միջավայրը, սակայն տարածության ու ժամանակի մեջ հաստատուն չէ, եւ սանձելը շատ դժվար է: Գիտնականները հաշվարկել են էներգիայի ընդհանուր քանակությունը, որը կարելի է ստանալ քանու օգնությամբ: Պարզվել է, որ մեր մոլորակի վրա քանու էներգիան այնքան է, որ կարող է լիովին բավարարել մարդկության էներգետիկ պահանջները: Մթնոլորտի բարձր շերտերում քամին ավելի ուժգին է եւ մշտական, ինչն ավելի մեծ քանակությամբ էներգիա է սպահովում, քան Երկրի մակերեսային կամ ծովային քամիները: Այսօր աշխարհում այլընտրանքային էներգիայի ամենադինամիկ զարգացող ուղղություններից մեկն է: Հողմային էներգիայի ներուժը համարվում է ամենամեծերից մեկը վերականգնվող էներգիայի աղբյուրներից: Ավելի քան 70-80 երկրում այսօր քանուց էլեկտրաէներգիա է ստացվում: Նրա ռեսուրսները կենտրոնացած են հիմնականում բարեխառն գոտում: 2012 թ.-ին Ղանիան իր էլեկտրական էներգիայի 29.3%-ը ստացել հողմային էներգիայից, Իսպանիան` 21.2%-ը, Պորտուգալիան` 20.8 %-ը, Գերմանիան` 19 %-ը, Իռլանդիան` 17.7%-ը Ղանիան նախատեսում է 2020 թ.-ին այն հասցնել 50 %-ի: Հողմաէներգետիկ կայանների 1 կՎ հզորության համար ներդրումները տատանվում են \$1100-2400 սահմաններում: Այսինքն ՄՎտ հզորության հողմակայանի կառուցման համար ներդրումները կարող են կազմել 1.1-2. մլն. ամերիկյան դոլլար: Մի շարք երկրներ հսկայակն ներդրումներ են անում այս ոլորտում եւ 2009 թվականի դրությամբ աշխարհի 80 երկրներում քանու էներգիան օգտագործվում է էլեկտրաէներգիա ստանալու նպատակով: Քանու էներգիայի կիրառությունը սահմանափակ է նրանով, որ այն անընդհատ չէ, անհրաժեշտ են էլեկտրաէներգիայի կուտակիչներ` հոսանքի մատակարարումն անընդհատ դարձնելու համար: Հողմաէներգետիկայի ոլորտը Հայաստանում այլընտրանքային էներգիայի զարգացման ամենահեռանկարային ուղղությունն է: Չնայած Հայաստանում ամկա հողմային էներգիայի ստացման մեծ ներուժին հողմակայանների կառուցման հետ կապված նախագծերի զգալի մասը դեռեւս չի իրականացվել, թեւս դրանց գործունեության համար պիտանի տեղանքները որոշվել են, որոշակի աշխատանքներ արդեն կատարվել են եւ կատարվում են: Տեսականորեն հողմային էներգիայի ներուժը Հայաստանում կարելի է անսահման


բարձր գնահատել, սակայն աշխարհագրական եւ լեռնային բարդ պայմանների պատճառով սահմանափակվում են կիրառման հնարավորությունները, որի պատճառով մեծանում են տեղափոխման ու տեղադրման ծախսերը: Հզոր հողմագեներատորների գործունեության համար պահանջվում են ավելի բարձր կայմեր եւ երկար թիակներ, առաջանում են տեխնիկական խոչընդոտներ հողմակայանների սարքավորումների փոխադրման եւ տեղակայման համար: Հայաստանն ունի խոստումնալից հողմային ռեսուրսներով մի շարք տարածքներ: Մինչ այժմ բնութագրված ամենից խոստումնալից տարածքներն են Սոթքի լեռնանցքը, Քարախաչի լեռնանցքը, Պուշկինի լեռնանցքը, Սիսիանի լեռնանցքը: Հայաստանի Հանրապետության միակ գործող հողմակայանը 2,64 ՄՎտ հզորությամբ «Լոռի-1» կայանն է:

Wind energy generation by region

Wind energy generation is measured in terawatt-hours (TWh). Figures include both onshore and offshore wind sources.



Source: Energy Institute Statistical Review of World Energy (2023)
 Note: CIS (Commonwealth of Independent States) is an organization of ten post-Soviet republics in Eurasia following break-up of the Union.



Մակընթացային էներգիա

Մակընթացային էլեկտրակայանները ջրաէներգետիկայի տեսակ է, որը էլեկտրաէներգիայի է վերածում մակընթացության էներգիան: Դրանք հատուկ սարքեր են, որոնք կառուցված են ծովափերին եւ օգտագործվում են մակընթացության ժամանակ դեպի ցամաք ընթացող ջրի էներգիան: Մակընթացություն եւ տեղատվություն է կոչվում այն երեւոյթը, երբ Լուսնի եւ Արեգակի ձգողության ուժերի ազդեցությամբ Համաշխարհային օվկիանոսի ջրի մակարդակը պարբերաբար տատանվում` օրական երկու անգամ բարձրանում եւ իջնում է: Մակընթացությունը լինում է Երկրագնդի շուրջը Լուսնի շարժմանը զուգընթաց, երբ Լուսնի ձգողության ազդեցությամբ Համաշխարհային օվկիանոսի ջուրն ուռչում է, ձգվում դեպի Լուսին եւ ավերից դուրս է գալիս: Այդ նույն ժամանակ մակընթացություն դիտվում է նաեւ Երկրագնդի տվյալ հատվածի ճիշտ հակառակ կողմում: Իսկ մակընթացության առանցքին ուղղահայաց ուղղությամբ ջուրը սեղմվում է, նրա մակարդակն իջնում է, ծովը նահանջում է ավից` տեղի է ունենում տեղատվութուն: Մակընթացությունն ու տեղատվությունն իրար հաջորդում են վեց ժամը մեկ : Բաց օվկիանոսում, ավերից հեռու մակընթացության ալիքի բարձրությունը մեկից երկու մետր է, իսկ ավերի մոտ` 10-15 մետր, առավելագույնը` 18 մետր (Ֆանդի ծովածոցում): Մակընթացություն-տեղատվություն առաջանում է նաեւ Արեգակի ձգողության հետեւանքով, սակայն շատ հեռու լինելով, Արեգակի ստացած ալիքն այնքան բարձր չէ, որքան Լուսնինը: Երբ Արեգակը, Լուսինը եւ Երկիրը գտնվում են մեկ ուղիղ գծի վրա, ապա Արեգակի եւ Լուսնի ձգողական ուժերը գումարվում են, եւ մակընթացությունն ավելի բարձր է լինում: Մակընթացության ժամանակ ծովի ջուրը ոչ միայն դուրս է հորդում դեպի ավերից ցամաք, այլեւ խորանում է ցամաքի մեջ` գետերի հոսանքին հակառակ ուղղությամբ եւ ավելացնում գետի խորությունը: Դա հնարավորություն է տալիս օվկիանոսային նավերին մտնելու փոքր գետերի նավահանգիստներ: Օրինակ օգտվելով մակընթացության պարբերականությունից` օրական անգամ Թեմզա գետով օվկիանոսային նավերը գետաբերանից խորանում են մինչեւ 64 կմ հեռու գտնվող Լոնդոնի նավահանգիստը: Մակընթացության-տեղատվության երեւոյթը երեւոյթը կարելուր նշանակություն ունի նավագնացության, ձկնորսության համար: Վերջին տարիներին սկսվել է նաեւ մակընթացային էներգիայի օգտագործումը: Մակընթացային էներգիան ապագայի շատ հզոր էներգիա է: Հաշվարկները ցույց են տվել, որ երկրագնդի վրա մակընթացային էներգիայի գումարային հզորությունը տատանավում է 1-6 մլրդ ԿՎտ սահմաններում: Սակայն գործնականում այդ էներգիան գրեթե չի օգտագործվում: Պատճառն այն է, որ մակընթացային էլեկտրակայանների կառուցումը թանկ է, էներգիայի ինքնարժեքը` բարձր, հետեւաբար բարձր, հետեւաբար դրանք մրցունակ չեն մյուս բոլոր տեսակի էլեկտրակայանների համեմատ: Այնուամենայնիվ, այսօր աշխարհի մի շարք երկրներում կառուցվել եւ հաջողությամբ շահագործվում է նման էլեկտրակայաններ: Առաջին մակընթացային էլեկտրակայանը («Ռանս») կառուցվել է Ֆրանսիայում` Բրետան թերակղզում, եւ տարեկան արտադրում է 540 մլն ԿՎտ/ժ էլեկտրաէներգիա: Մակընթացային էներգիայի ամենամեծ ռեսուրսներին տիրապետում են Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Կանադան, Ավստրալիան, Արգենտինան, ԱՄՆ-ը: Սակայն այդպիսի կայանները հզոր չեն, որովհետեւ տուրբիններում ջրի ճնշումը մեծ լինել չի կարող, հագիվ մի քանի մետր,

բացի այդ ճնշումը միշտ փոխվում է: Այդ ասպարեզում կան տեխնիկական բնույթի շատ դժվարություններ: Սակայն վերջերս տեղի ունեցած բազմաթիվ տեխնոլոգիական զարգացումներն ու բարելավումները, միաժամանակ դիզայնի եւ տուրբինայի տեխնոլոգիաները ցույց են տալիս, որ մակընթացային էլեկտրակայանի ընդհանուր հասանելիությունը կարող է լինել ավելի մեծ քան նախկինում ենթադրվում էր:



Երկրաջերմային էներգիա

Այսօր էներգիայի այլընտրանքային աղբյուրների շարքում անընդհատ աճում երկրաջերմային էներգիայի բաժինը: Երկրաջերմային էլեկտրակայանները Երկրի ընդերքի ջերմությունը փոխակերպում են էլեկտրական էներգիայի: Ջերմության ստորգետնյա աղբյուրներ են Երկրի կեղեւում տեղի ունեցող ռադիոակտիվ փոխակերպումները, քիմիական ռեակցիաները եւ այլն: Երկրի մակերեսույթից 2000-3000 մետր խորության վրա շրջապատույտ կատարող ջրերի ջերմաստիճանը հասնում եւ անցնում է 100 °C- ից: Մեծ խորություններում շրջապատույտ կատարող ջրերը զգալիորեն տաքանում են եւ կարող են Երկրի մակերեսույթ դուրս բերվել հորատանցքերով: Հրաբխային շրջաններում այդ ջրերն ունեն առավել բարձր ջերմաստիճան եւ երկրակեղեւի ճեղքերով բարձրանում են վեր՝ երբեմն անջատվելով գերտաքացած շոգու ձեւով: Երկրաջերմային էլեկտրակայաններում էլեկտրաէներգիայի արտադրությունն իրականացվում է ուղիղ, ոչ ուղիղ եւ խառը սխեմաներով: Ուղիղ սխեմայի դեպքում ընդերքից դուրս եկող բնական շոգին խողովակներով ուղղարկվում է տուրբին: Աշխատած շոգին եւ կոնդենսացված ջուրը օգտագործում են ջերմաֆիկացման համար եւ երբեմն՝ քիմիական արդյունաբերության մեջ: Ոչ ուղիղ սխեմայի դեպքում կատարվում է շոգու նախնական մաքրում ագրեսիվ(ուժեղ կոռոզիա առաջացնող) գազերից: Խառը սխեմայի դեպքում չմաքրված բնական շոգին մտնում է տուրբին, ապա կոնդենսացված ջրից հեռացվում են չլուծված գազերը: Շոգեջրային խառնուրդը մինչեւ 840 կշ/կգ (200 կկալ/կգ) ջերմությամբ հորատանցքերով դուրս է բերվում Երկրի մակերեսույթ եւ ուղղվում դեպի գատիչ սարքերը, որտեղ 0,23ՄՆ/մ²(2,3 մթնոլորտ) ճնշման տակ անջատվում է ջրից եւ մտնում տուրբին, իսկ 120°C ջերմաստիճանի ջուրը օգտագործվում է բնակավայրերի ջերմատակարարման համար: Երկրաջերմային էներգիան մեծ չափով օգտագործվում է Իսլանդիայում: Այն հանդիսանում է էներգիայի ստացման հիմնական աղբյուրը, ինչպես նաեւ մեծ ծավալներով օգտագործվում է բնակարանները ջեռուցելու նպակակով: Այդպիսի էլեկտրակայաններ աշխատում են Կամչատկայում(Ռուսաստանի Ղաշնություն), Իտալիայում, Նոր Զելանդիայում, Ճապոնիայում, ԱՄՆ-ում, Կենտրոնական Ամերիկայի երկրներում: Հայաստանում երկրաջերմային ռեսուրսների ուսումնասիրությունն ու երկրաջերմային էներգետիկայի զարգացումը նույնպես հեռանկարային նշանակություն կարող է ունենալ, քանի որ Հայաստանի ընդերքում մագմային օջախների առկայությունը ենթադրում է երկրաջերմային ռեսուրսների մեծ պաշարներ: Երկրաջերմային կայանների կառուցման ծախսերը թեւեւ թանկ են 1 կՎտ-ի համար 2000-4000 ամերիկյան դոլլար սահմաններում, սակայն դրանցից էլեկտրաէներգիայի կամ ջերմային էներգիայի ստացման ինքնարժեքը համեմատաբար էժան է: Նշենք, որ երկրաջերմային կայանները ապահովում են Իսլանդիայի էլեկտրաէներգիայի 19%-ը եւ տաք ջրի ու ջեռուցման 87%-ը: Հայաստանում երկրաջերմային էներգիայի վատ ուսումնասիրության պատճառով դեռեւս շատ բան ասել չենք կարող ամբողջ ներուժի եւ զարգացման հեռանկարների մասին: Հայաստանում նախատեսված է երկրաջերմային էլեկտրակայանի (ԵՋԷԿ) կառուցման ծրագիր, որն ենթադրվում է, որ կունենա տեղակայման 5 ՄՎտ հզորություն, էլեկտրաէներգիայի միջին տարեկան արտադրությունը կկազմի 194.4 մլն կՎտ.ժ, իսկ գումարային ներդրումները՝ մոտ 39 մլն ԱՄՆ դոլար: ԵՋԷԿ-երի

աշխատանքները կախված չեն եղանակային փոփոխություններից և բնորոշ են հզորության գործակիցների առավել բարձր արժեքներ՝ մոտ 90-95%, իսկ հողմային, արեգակնային և փոքր ջրաէլեկտրակայանները սեզոնայնության և եղանակի փոփոխության պատճառով աշխատում են կարողությունների 25-40 % չափով:



Ապագայի միտումներ էներգետիկայի ոլորտում

Վերականգնվող էներգիայի միջազգային գործակալության զեկուցագրի համաձայն (IRENA- Renewable Power Generation Costs in 2012: An Overview), ամբողջ աշխարհում վերականգնվող էներգետիկան շարունակում է արագ զարգանալ եւ նորագույն տեխնոլոգիաների լայնածավալ ներդրումները նվազեցնում են վերականգնվող էներգիայի աղբյուրներից էներգիայի ստացման ծախսերը: Այդ զեկուցագրի համաձայն միայն 2011թ.-ին շարք են մտել նոր հողմակայաններ 41 ԳՎտ հզորությամբ, արեւային ֆոտովոլտայիկ (ՖՎ) կայաններ 30 ԳՎտ հզորությամբ, փոքր ջրաէլեկտրակայաններ՝ 25 ԳՎտ հզորությամբ, կենսազանգված մշակող կայաններ՝ 6 ԳՎտ հզորությամբ, կենտրոնացված արեւային էներգիայի կայաններ՝ 0.5 ԳՎտ եւ երկրաջերմային կայաններ՝ 0.1 ԳՎտ հզորությամբ: Միաժամանակ էլեկտրաէներգիայի միջինացված ծախսերը ամբողջ աշխարհում նույնպես արագ նվազում են, օրինակ երկրաջերմային էներգիայի ստացման ծախսերը ներկայումս տատանվում են 0.5-1.2 ցենտ/կՎտ.ժ, հողմային էներգիայինը՝ 8-10 ցենտ/կՎտ.ժ, արեւային ֆոտովոլտայիկ կայաններինը՝ 15-31 ցենտ/կՎտ.ժ, իսկ կենտրոնացված արեւային էներգիայի կայաններինը՝ 22-25 ցենտ/կՎտ.ժ սահմաններում: Դա այն դեպքում, երբ երկրաջերմային էներգիայի միջինացված ծախսերը ընդամենը 2-3 տարի առաջ տատանվում էին 3.6-3.9 ցենտ/կՎտ.ժ, հողմայինը՝ 9-13 ցենտ/կՎտ.ժ, ՖՎ-ը՝ 40-47 ցենտ/կՎտ.ժ սահմաններում: Ինչպես տեսնում ենք ամենաթանկ էներգիա եւ էլեկտրաէներգիա ներկայումս ապահովում են արեւային ՖՎ եւ էներգիայի կայանները, իսկ ամենացածր՝ երկրաջերմային կայանները: Այսպիսով, ամբողջ աշխարհում ամենաարագ տեմպերով հատկապես մեծանում են հողմակայանների, ՓՀԷԿ-երի եւ արեւային ֆոտովոլտայիկ կայանների հզորությունները, միաժամանակ նորագույն տեխնոլոգիաների ներդրման արդյունքում արագ տեմպերով նվազում են այլընտրանքային էներգիաների ստացման ծախսերը, ինչը կարելի է փաստարկ է մեզ մոտ հողմային եւ արեւային տեխնոլոգիաների ներդրման եւ զարգացման համար: Նվազում են նաեւ այդ կայանների կառուցման ծախսերը եւ ավելանում դրանց կարողության կամ հզորության գործակիցները: Դիտարկենք հողմային, արեւային եւ ջերմաէներգետիկ (գեոթերմալ) ռեսուրսների զարգացման հեռանկարները Հայաստանում, ինչպես նաեւ դրանց կիրառելիության տեխնիկական, բնապահպանական եւ տնտեսական ասպեկտները: Հենց սկզբից կարող ենք ասել, որ պետք չէ պատրանքներին տրվել, նույնիսկ այլընտրանքային էներգետիկայի զարգացման համար կատարյալ պայմանների ապահովման դեպքում, այն երկար ժամանակ չի դառնալու Հայաստանի էներգետիկ հզորությունների ձեւավորման հիմնական աղբյուրը, սակայն կարող է լինել դրա մի կարելի ուղղությունը եւ աստիճանաբար տասնյակ տարիների ընթացքում ձեռք բերել գերակշռող դեր, հատկապես էլեկտրաէներգիայի ստացման ոլորտում: Ընդհանրապես դրանց զարգացման պարզ ռազմավարությունը ենթադրում է, որ Հայաստանում ատոմակայանի, ՋԷԿ-երի եւ ջրաէլեկտրակայանների գործունեության հետ աստիճանաբար պետք է մեծացնել էներգիայի այլընտրանքային աղբյուրների համակարգված ներդրումը եւ կիրառումը: Բնական ռեսուրսների այդ տեսակների (հատկապես հողմային եւ արեւային) առատ

Եւ ընդգրկուն լինելը մեր երկրի առավելությունն է, սակայն անհրաժեշտ ֆինանսական միջոցների տրամադրումը, ընդհանրապես թույլ մենեջմենթը եւ տնտեսական անարդյունավետ հենքի նպաստող իրավա-օրենսդրական բազակայությունը, այդ ոլորտում գիտելիքների եւ փորձի բացակայությունը, գործող բյուրոկրատական համակարգը և այլ բազմաթիվ գործոններ դրանց զարգացմանը արգելակող հիմնական խոչընդոտ են: Մեր երկրում արեւային, հողմային եւ երկրաջերմային ռեսուրսների ներուժի գնահատական տալը խիստ հարաբերական է, դրանց գնահատման գիտական եւ տեխնիկական եւ տնտեսական հզորությունները դեռեւս չեն կատարվել: Այնուամենայնիվ, որոշ տեղական եւ միջազգային կառույցների կողմից որոշակի հետազոտություններ արվել են: Օրինակ, համաձայն Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամի (ՀՎԷՀ) գնահատականների, արեգակնային ֆոտովոլտայիկ կայաններով հնարավոր է ապահովել 1000 ՄՎտ-ը գերազանցող էներգետիկ հզորություններ, հողմակայանների միջոցով տեխնիկապես հնարավոր է 300-500 ՄՎտ հզորությունների ստեղծում, երկրաջերմային էներգիայի կայանները կարող են ապահովել 25-75 ՄՎտ հզորություն, իսկ արեւային կոլեկտորային կայանների միջոցով հնարավոր է ապահովել 1000 ՄՎտ-ը գերազանցող հզորություններ Որոշ այլ գնահատումների համաձայն Հայաստանում տեսականորեն հողմային կայանների կարողությունը կարող է կազմել մինչեւ 5000 ՄՎտ: Իսկ էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարության գնահատականների համաձայն հողմային կայանները կարող են ձեւավորել մոտ 450 ՄՎտ հզորություններ, էլեկտրական էներգիայի տարեկան 1.26 մլրդ կվտ.ժ արտադրության ծավալով: Ընդունված է, որ վերականգնվող էներգետիկան դրական ազդեցություն ունի շրջակա միջավայրի վրա, քանի որ այն ի տարբերություն ջերմակայանների կրճատում է ջերմոցային գազերի արտանետումները, նվազում է ջրի սպառումը, օդի աղտոտումը, կրճատում է վնասակար թափոնները: Իսկ վերականգնվող էներգետիկային բնորոշ բնապահպանական խնդիրներից են հողերի օտարման խնդիրը, լանդշաֆտի փոփոխությունը: Օրինակ հողմակայանների գործունեությունից առաջանում են ցածր եւ բարձր հաճախականության աղմուկներ, էլեկտրամագնիսական ճառագայթում, թրթռումներ, ինֆրաձայնային աղմուկը բացասական է ազդում կենսաբանական օրգանիզմների վրա: Երկրաջերմային էլեկտրակայանները, նույնպես անվտանգ չեն, տեխնիկական ոչ ճիշտ շահագործման արդյունքում կարող են լուրջ վնաս հասցնել շրջակա միջավայրին, տեղանքի նստեցման պատճառ դառնալ: Ընդերքից դուրս եկող գազային խառնուրդները պարունակում են՝ ածխաթթու գազ, ջրածին, մեթան, ամոնիակ, ծծմաջրածին եւ այլ գազեր, որոնք շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն են գործում: Հնարավոր է բարձր աղմուկ հորատանցքերի մոտ, միաժամանակ գոլորշացման հետեւանքով օդի խոնավությունը բարձր է լինում: Արեւային տեխնոլոգիաները մեծ մակերեսներ են զբաղեցնում եւ ստվերում թողնում հողային տարածքները: Հայելային անդրադարձիչների պատճառով օդը տաքանում է, փոխվում է ջրային հաշվեկշիռը, նվազում է շրջապատի խոնավությունը: Արեգակնային ջրատաքացուցիչները հանդիսանում են ջրերի աղտոտման աղբյուր: Այսպիսով, եթե անփոփենք, ապա Հայաստանում հատկապես հեռանկարային են համարվում հողմակայանները: Արեւային ֆոտովոլտայիկ կայանները թեւեւ կապիտալատար եւ թանկ տեխնոլոգիաներ են, սակայն միջնաժամկետ եւ երկարաժամկետ հեռանկարում դրանք անկասկած արդյունավետ եւ տնտեսապես շահավետ կլինեն: Երկրաջերմային էներգիայի ներուժի արդյունավետ յուրացման դեպքում, այն նույնպես էապես կնպաստի էներգետիկ անվտանգությանը: Արեւային

Էներգիայի այլ տեխնոլոգիաները նույնպես հեռանկարային են մեր տնտեսության համար, նույնիսկ ներկա պայմանների համար որոշ տեսակի տեխնոլոգիաների շահագործումը ձեռնտու է: Չմոռանանք, որ հելիոտեխնոլոգիաների եւ էներգախնայության ոլորտներում որոշակի փորձառություն եւ ներուժ ունենք:

Եզրակացություն

Հաշվի առնելով միջազգային փորձը և ՀՀ բնառեսուրսային ներուժը, ինչպես նաև այն փաստը, որ ՀՀ-ն աղքատ է վառելիքաէներգետիկ պաշարներով, մենք գտնում ենք, որ Հայաստանը ապագայում մեծ հեռանկար ունի կանաչ կամ վերականգնվող էներգիայի բնագավառում: Իսկ քանի, որ այսօրվա աշակերտը վաղը գործարար է, կառվարիչ ու ինժեներ, ապա կարևոր ենք համարում այս թեմայի ուսուցման ժամանակ խորացված գիտելիքներ տալը: Սա կնպաստի որ աշակերտների մոտ առաջանա հետաքրքրություն այս ոլորտի նկատմամբ, և ապագայում ընտրի այնպիսի մասնագիտություն, որը կօգնի կայացնել վերականգնվող էներգետիկայի ոլորտը: Վերականգնվող էներգիայի արտադրությունը, որը հաճախ կոչվում է էներգիայի վերականգնում կամ թափոններից էներգիայի վերափոխում, գործընթաց է, որը ներառում է ոչ վերամշակվող թափոնների վերածումը օգտագործելի էներգիայի: Էներգիայի վերամշակումը կարող է իրականացվել տարբեր ձևերով՝ կախված այն բանից, թե ինչպես է այն օգտագործվում: Սա կարող է օգնել նվազեցնել թափոնների հեռացումը շրջակա միջավայրից և ապահովել էներգիայի լրացուցիչ աղբյուրներ: Աշակերտները սա գիտակցելով կնվազեցնեն նաև թափոնների կուտակումը և ըստ հնարավորույն կտեսակավորեն այն: Այս գաղափարի քննարկումը նույնպես կարևոր է դպրոցում: Քննարկվող թեման կապված է ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության, հասարակագիտության հետ և այս շրջանակներում կարելի է իրականացնել ոչ միայն ինտեգրված դասեր այլև կազմակերպել նախաձյին աշխատանքներ , միջոցառումներ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աշխարհագրություն: Վարդանյան Թրաիել, Պոտոսյան Ակսել, Ասատրայն Վարդան, Հակոբյան Լուսինե
2. Աշխարհագրություն: Ակսել Պոտոսյան, Մաքսիմ Մանասյան, Խաչիկ Սարգսյան, Արսեն Գրիգորյան, Թրաիել Վարդանյան, Արմեն Հովսեփյան
3. <https://www.dw.com/ru/vie-uze-stabilno-proizvodat-bolee-50-elektroenergii-v-frg/a-66996754?maca=rus-facebook-dw&fbclid=IwAR1W0tFMiXIP0zhBStt6hsuaBH4KIoNzPSX0hi2sQyt6EHk7sOKzqJGMaEk>
4. [Հետազոտություններ և վերլուծություններ - R2E2](#)
5. [GSR2014 full report low res.pdf \(ren21.net\)](#)
6. [Վերականգնվող էներգետիկա - Նախարարություն - www.minenergy.am](#)

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱԶՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ



ՊԱՐՏԱԴԻՐ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

- ԹԵՄԱ՝** Բնակչության ռասսաների դասավանդման
առանձնահատկությունները աշխարհագրության դասին
- ԿԱՏԱՐՈՂ՝** Քառյան Նանե
- ՂԵԿԱՎԱՐ՝** Ամիրխանյան Արմեն

Բովանդակություն

Ներածություն.....	3
Գլուխ 1 Աշխարհի ռասսաները	
1.1 Ռասսաների պատմականորեն ձևավորված տիպերը և ընդգրկման շրջանները.....	4
1.2 Կովկասյան ռասսա.....	10
1.3 Միջերկրածովյան ռասսա.....	11
1.4 Արմենոիդ ռասսա.....	11
Գլուխ 2 Աշխարհագրության ուսուցման մեթոդները	
2.1 Աշխարհագրության ուսուցման մեթոդների դասակարգումը.....	14
2.2 Բնակչության ռասսաների դասավանդման մեթոդները.....	15
Եզրակացություն.....	19
Գրականության ցանկ.....	20

Ներածություն

Հետազոտական աշխատանքում անդրադարձել եմ <<բնակչության ռասսաների>> դասավանդման առանձնահատկությունները աշխարհագրության ժամին: Ընդգծել եմ թեմայի կարևորությունը ոչ միայն դասի շրջանակներում այլ հետագա կյանքում հանդիպող տարբեր իրավիճակներում և դրանց լուծման ու հաղթահարման գործընթացում: Բնակչության ռասսաները հիմնական սոցիալ-մշակութային և կենսաբանական հասկացություններից են, որոնք նշանակալի դեր են խաղում մարդկության պատմության, մարդաբանության և սոցիոլոգիայի ուսումնասիրության մեջ: Ռասսաները կատեգորիաներ են, որոնք օգտագործվում են մարդկանց դասակարգելու համար՝ հիմնվելով ֆիզիկական և գենետիկական հատկանիշների վրա, ինչպիսիք են մաշկի գույնը, դեմքի ձևը և մազերի կառուցվածքը: Այս համատեքստում կարևոր է նշել, որ ռասայի հայեցակարգն ունի բարդ և հակասական անցյալ, և հասարակության և գիտության մեջ նրա դերի ժամանակակից ըմբռնումը մշտապես փոփոխվում է: Այս աշխատանքում մենք կանդրադառնանք ռասայի հայեցակարգի զարգացմանը, դրա պատմական համատեքստին և այս թեմայի ներկայիս ըմբռնմանը:

Աշխատանքի առաջին գլխում ներկայացված է բնակչության ռասսաները, դրանց տիպերը և տարածման շրջանները:

Երկրորդ գլխում դասավանդման մեթոդները, և դրանց միջոցով ձևավորված բարոյական արժեքների բնութագիրը և դրանց դրսևորման գործընթացը:

Որոշ հոգեբանների և մանկավարժների հետազոտություններն ապացուցում են, որ ուսուցման մեջ հաջողության բացակայությունը պայմանավորված է ոչ թե աշակերտի բնածին սակավ ընդունակություններով, այլ ուսուցչի կողմից կիրառվող ոչ արդյունավետ աշխատանքներով որոնք , ըստ էության , հաղորդում են գիտելիք , բայց չեն սովորեցնում ինքնուրույն սովորել: Առաջարկում եմ աշակերտներին սովորեցնել, սովորել սովորելու կարողականություն, գտնել յուրաքանչյուր աշակերտի ամենամատչելի տարբերակը որով կկարողանա սովորել և ընկալել դասը:

Գլուխ 1 Աշխարհի ռասսաները

1.1 Ռասսաների պատմականորեն ձևավորված տիպերը և դրանց ընդգրկման շրջանները

Ռասան պատմականորեն կազմավորված և ընդհանուր ժառանգական հատկանիշներով ծագման միասնականությունն արտահայտող մարդկանց արեալային խումբն է: Ելնելով մոնոգենիզմի սկզբունքից, արդի մարդաբանությունը գտնում է, որ բոլոր ռասսաները առաջացել են նույն տեսակի բրածո մարդակերպից: Հետևաբար անհիմն են մարդակերպ կապիկների տարբեր ցեղերից ռասսաների առաջացման տեսակետները:

Ռասա բառը, որ հավանաբար առաջացել է արաբերեն ռաս (գլուխ, սկիզբ) արմատից, առաջին անգամ արդի իմաստով գործածել է ֆրանսիացի մարդաբան Ֆրանսուա Բեռնյեն: Գլխավորապես ելնելով արտաքին կազմաբանական հատկանիշներից՝ 18-20-րդ դարերում առաջարկվել են ռասսաների բազմաթիվ դասակարգումներ:



Նկ.1 Խառը ռասսաների ներկայացուցիչներ

Մարդաբանության մեջ հստակությամբ զատորոշվում են երեք հիմնական կամ մեծ ռասսաներ՝ նեգրոիդ ռասա , եվրոպոիդ ռասա և մոնղոլիդ ռասա : Մակայն արդի մարդկության ոչ բոլոր խմբերն են պատկանում այդ երեք ռասսաներին:

Օրինակ, ավստրալիացիները, մելանեզացիները, հնդկացիները, բուշմենները, պոլինեզացիները, այնքան, վեդդաները և ուրիշ խմբեր դիտվում են կամ երեք մեծ ռասաներից դուրս, կամ դրանց միջև ընկած միջանկյալ ձևեր, կամ դրանցից մեկից առանձնացված տիպեր և այլն: Իրենց արեալի արևելյան սահմաններում եվրոպոիդները հնագույն ժամանակներից փոխազդեցության մեջ են եղել մոնղոլոիդների հետ: Նրանց վաղ միախառնման (սկսվել է հավանաբար, դեռևս միջին քարի դարում) հետևանքով, Սիբիրի հյուսիս-արևմուտքում և Եվրոպայի ծայր արևելքում կազմավորվել է ուրալյան ռասան, որին բնորոշ է միջանկյալ մոնղոլոիդա-եվրոպոիդյան հատկությունների զուգորդումը որոշ ուրույն գծերի հետ (օրինակ՝ կճատ քթի): Ուրալյան ռասային շատ հատկանիշներով մոտիկ է լապոնոիդ ռասան: Շատ մարդաբաններ նույնիսկ այդ երկու ռասաներին միացնում են (ուրալա-լապոնոիդյան):

Հետագայում (մթ առաջին դարերից) Ուրալի և Ենիսեյի միջտափաստանային գոտում եվրոպոիդների և մոնղոլոիդների միախառնման ընթացքում ձևավորվում է հարավսիբիրական ռասան (բնորոշվում է չափազանց լայն դեմքով և արտահայտված կարճագանգությամբ):



Նկ.2 Մոնոլոիդ ռասայ ներկայացուցիչներ

Միջին դարերում Միջին Ասիայի տարածքում կազմավորվում են նոր՝ եվրոպոիդա-մոնղոլոիդ խառը ռասաներ: Բուն մոնղոլոիդները Ասիայում ստորաբաժանվում են երկու գլխավոր խմբերի՝ մայրցամաքային և խաղաղօվկիանոսյան. առաջինը երկրորդից տարբերվում է առավել բաց գույնի

մաշկով, մազերի ու աչքերի գունաթափման որոշ հակումով, դեմքի խոշորությամբ, հարթակզակությամբ, առավել բարակ շուրթերով: Մայրցամաքային մոնղոլոիդների կազմում զատվում են սիբիրյան կամ հյուսիսասիական և միջինասիական ռասաները: Մայրցամաքային և խաղաղօվկիանոսյան մոնղոլոիդների միջև միջանկյալ դիրք է գրավում արկտիկական (Էսկիմոսյան) ռասան (բնորոշվում է ծայրահեղ բարձր ու լայն դեմքով, առաջածնոտության հակումով և շատ նեղ քթով): Խաղաղօվկիանոսյան մոնղոլոիդների բարձր, բայց համեմատաբար նեղ դեմքով հյուսիսային խմբերը միավորվում են հեռավոր-արևելյան կամ արևելասիական ռասայի մեջ: Ասիական ծագում ունեցող ամերիկյան մոնղոլոիդների դասակարգումը շատ է բարդացված, քանի որ գաղութարարների ձեռքով ոչնչացվել են հնդկացիների շատ խմբեր, քշվել բնակության սկզբնական վայրից կամ խառնվել եվրոպացիների ու աֆրիկացիների հետ:



Նկ.3 Ավստրալոիդ տղամարդ

Հարավասիական կամ մալայան ռասայի մեջ մտնող խաղաղօվկիանոսյան մոնղոլոիդների հարավային խմբերը դրսևորում են բավականին ավստրալոիդյան առանձնահատկություններ (ալիքավոր մազեր, երբեմն մորուքի ու մարմնի փարթամ մազեր, մուգ մաշկ, ցածր դեմք, համեմատաբար լայն քիթ, հաստավուն շուրթեր և այլն): Թվարկած հատկանիշներից շատերը յուրահատուկ են ճապոնացիներին, որոնց

ռասայական կազմի ձևավորմանը մասնակցել են մոնղոլիդ և ավստրալիդ բաղադրատարրերը

Բուշմեններ չարավային և Արևելյան Աֆրիկայի հնագույն և հիմնական բնակիչները: Ապրում են Կալահարի և Նամիբ անապատներում ու հարակից շրջաններում: Խոսում են բուշմենական և բանտու լեզուներով:



Նկ. 4 Բուշմեն կանայք

Բուշմենները զբաղվում են որսորդությամբ (տղամարդիկ) և վայրի պտուղների հավաքչությամբ (կանայք): Նրանց հիմնական զենքերն են նետն ու աղեղը և գավազանը: Նետերի ծայրերը թունավորված են: Թույնը, որն ազդում է գոհի նյարդային համակարգի վրա, ստանում են չորացված ու աղացած հատուկ բզեզների թրթուրներից: Հագուստը կաշվե գոգնոց է: Ապրում են թփուտներում՝ ճյուղերից շինված ժամանակավոր ծածկերի տակ: Բուշմենները հայտնի են իբրև ժայռապատկերների հմուտ վարպետներ:

ՀԱՀ-ում, Լեսոթոյում, Ռոդեզիայում և Նամիբիայում պահպանված հնագույն ժայռապատկերները վերագրվում են մ.թ.ա. 1-ին հազարամյակին:

Ըստ տվյալների բուշմենները ամենահնագույն էթնոտիպի և Y քրոմոսոմային A հապլոիդ հավաքակազմի կրողներն են: Մարդաբանական կառուցվածքով տարբերվում են նեգրոիդներից, քանի որ ունեն ավելի բաց գույնի մաշկ, բարակ

շրթունքներ: Ունեն ցածր հասակ՝ մինչև 150 սմ: Մաշկն ունի կարմրավուն երանգ և վաղաժամ կնճռոտվելու հատկություն: Դիմագծերով նման են մոնղոլոիդի:

Ապրում են խմբերով, որոնք կազմված են մի քանի ընտանիքներից: Փաստացի առաջնորդ, որպես այդպիսին՝ չունեն: Ամուսնությունները հիմնականում մոնոգամ են, սակայն կան նաև պոլիգամ ամուսնություններ:

Ազգային խոհանոցի յուրահատկություններից է «բուշմենական բրինձը»՝ այսինքն մրջյունների թրթուրները կերակրի մեջ օգտագործելը: Համադամ կերակուր է համարվում մորեխների տապակյան: Հետաքրքիր է բուշմենների կողմից երաշտի ժամանակ ջրի պաշար կուտակելու պրոցեսը: Չորացած աղբյուրի խորքում փորում են մի փոքր փոս, որի վրա տեղադրում են փոքրիկ խողովակ՝ ծայրին հատուկ ֆիլտր, այնուհետև բերանով ներս են քաշում ջուրը: Բերանի մեջ հավաքելուց հետո, ջուրը լցնում են ջայլամի ձվի դատարկ կճեպի մեջ:




Նկ. 5 Այներ

Այներ, տեղաբնիկ հնագույն ժողովուրդ, որ յամատո ճապոնացիներից և ուսներից առաջ ապրել է Օխոտի ծովի ափամերձ տարածքներում, ներառյալ Ճապոնիայի հյուսիսային կղզիները, Ռուսաստանի Կամչատկա թերակղզու հարավը, Կուրիլյան և Մախալին կղզիները, Խաբարովսկի երկրամասը: Այս ժողովրդի ծագումնաբանության վերաբերյալ տարբեր վարկածներ կան, դրանցից մեկի համաձայն նրանց նախնիները եկել են Հայկական

լեռնաշխարհից: Ճապոնական պատմական աղբյուրներում այս ժողովուրդը հիշատակվում է էգո անվանումով:

Պաշտոնապես Ճապոնիայում հաշվվում է այնու ժողովրդի մոտավորապես 25.000, ոչ պաշտոնապես՝ 200.000 և ավելի ներկայացուցիչ (Ճապոնական հասարակությունում գրեթե համապարփակ ուժացման ենթարկվելու հետևանքով այնու ժողովրդի բազում ներկայացուցիչներ պատկերացում չունեն իրենց նախնիների մասին): 2000 թվականի տվյալներով՝ այսպես կոչված մաքուր այնուների թվաքանակը գնահատվել է 300-ի սահմաններում: 1966 թվականին արձանագրվել է այնուերեն խոսող շուրջ 300, 2008 թվականին՝ 100 անհատ :



Նկ. 6 Հնդկացիներ

Հնդկացիներ, Ամերիկայի բնիկ ժողովուրդներին տրվող ընդհանուր անունը (բացառությամբ էսկիմոսների և ալեուտների): Անվանումը ծագել է մինչև 15-րդ դարի վերջերը առաջին երվրոպացի ծովագնացների (Քրիստափոր Կոլումբոս և այլք) սխալ պատկերացման պատճառով, որոնք իրենց կողմից բացահայտած Ամերիկայի անդրատլանտյան երկրները սխալմամբ համարում էին Հնդկաստան: Մարդաբանական տիպով հնդկացիները պատկանում են ամերիկանոիդ ռասային: 21-րդ դարի սկզբի տվյալներով Ամերիկայում հնդկացիները ընդհանուր թիվը կազմում է ավելի քան 60 միլիոն մարդ, իսկ հաշվի առնելով նաև այդպես կոչված ապացեղականացված (ցեղային պատկանելիությունը կորցրած) հնդկացիների թիվը

կազմում է մոտ 75 մլն: Այժմ գոյություն ունի մոտավորապես հազար հնդկացիական ժողովուրդ, այն դեպքում, երբ 15-րդ դարի վերջում կային 2200 ժողովուրդ:

1.2 Կովկասյան ռասսա




Նկ. 7 Կովկասյան ռասսայի ներկայացուցիչ

«Կովկասյան ռասսա» (լատ.՝ *Varietas Caucasia*) տերմինն առաջարկել է գերմանացի մարդաբան Ֆրիդրիխ Բլումենբախը 18-րդ դարում: Վերջինս այդ ռասային է վերագրել Եվրոպայի ազգերին (բացառությամբ ֆինների, հունգարների ու թուրքերի), ինչպես նաև հարավային ու Առաջավոր Ասիայի և հյուսիսային ու հյուսիսարևելյան Աֆրիայի բնակիչներին: Ռասան այդպես է կոչվել այն պատճառով, որ Բլումենբախը սխալմամբ Կովկասը համարել է մարդության ճննդավայր :

Ժամանակակից գիտությունը Բլումենբախի այն վարկածը (որ հիմնված է «Էսթետիկական չափանիշների» վրա) այն մասին, թե մարդկությունն առաջացել է Կովկասում, համարում է սխալ՝ անդելով, որ մարդկության՝ որպես *Homo* տեսակի, ինչպես նաև ժամանակակից մարդու՝ *Homo sapiens* առաջացման վայրն Աֆրիկան է:

1.3 Միջերկրածովյան ռասսա

19-րդ դարում հասկացությունների՝ հաճախ հանդիպող շփոթմունքից խուսափելու համար գերմանացի ուսումնասիրող Ֆ. Սյուլլերն առաջարկել է «միջերկրածովյան ռասսա» տերմինը (որովհետև այդ ռասային պատկանող ժողովուրդներն իրենց զարգացման գագաթնակետին են հասել Միջերկրական ծովի ափերին:



Ա. 8 Միջերկրածովային ռասսայի ներկայացուցիչ

Տերմինն այդ ժամանակ ընդունվել է ազգագրագետների մեծ մասի կողմից (Օսկար Պեշել, Գելվալդ և այլք) և մինչև 19-րդ դարի վերջը գիտական աշխատություններից գրեթե դուրս է մղել Բլումենբախի առաջարկած տերմինը, սակայն ներկայում այն տվյալ նշանակությամբ օգտագործվում է միայն որպես ավելի մեծ հնդկա-միջերկրածովյան ռասայի մի մասի անվանում:

1.4 Արմենոիդ ռասսա

Արմենոիդ ռասսա, 20-րդ դարի ռասայական մարդաբանությունում Կովկասյան ռասայի ենթատիպ: Համաձայն մարդաբան Կարլետոն Կունի՝ արմենոիդ ռասայի տարածման կենտրոն են համարվել Արևմտյան ասիայի հյուսիսային մասը, մասնավորապես Հայաստանը և Հարավային Կովկասը, Իրանը, Վերին Միջագետքը, Հարավարևելյան Թուրքիան և Լևանտը:

Հին ժողովուրդներից արմենոիդներին էին պատկանում Ուրարտական միտանացիները և հուրիտական ասորիները:



Նկ. 9 Արմենոիդ ռասայի ներկայացուցիչ

Այս տեսակի հիմնական ժամանակակից ներկայացուցիչները հայերն են Պոնտացի հույներ ավելի փոքր չափով վրացիների Արևելյան ենթաէթնիկ խմբերը:

Արմենոիդ ռասայի ազդեցությունը մեծ է Հարավային Եվրոպայի շատ ժողովուրդների արտաքին տեսքի վրա, նրանցից շատերը հույներ բուլղարացիներ ալբանացիներ են:

Ռենատո Բիասուտին բնութագրում էր Արմենոիդ տիպը որպես «Անթափանց-սպիտակից մինչև շագանակագույն մաշկ, մուգ մազեր և մուգ աչքեր, առատ մազածածկույթ, միջին հասակ, ամրակազմ մարմին, լայն գլուխ, կլորացված ծոծրակ, շատ երկար դեմք, ուղիղ և նեղ քիթ բարձր քթի կամուրջով, բարակ շրթունքներ, աչքերի նեղ բացվածք» ունեցող: Կարլետոն Ս. Կունը գրել է, որ Արմենոիդ ռասայական տիպը շատ նման է Դինարականին, պայմանավորված, ամենայն հավանականությամբ, Միջերկրածովյանների (ովքեր հաճախ ունենում են ձիթապտղագույն մաշկ) և Ալպիացիների (ովքեր հաճախ ունենում են շագանակագույն մաշկ) հետ ռասայական խառնումով: Միակ տարբերությունն այն է, որ Արմենոիդները ունեն մի փոքր ավելի մուգ պիգմենտացիա: Նա նկարագրում է Արմենոիդոդը որպես Կովկասիդ ռասայի ենթառասա: Ասում էին, որ Արմենոիդները հայտնաբերվել են ողջ Եվրասիայում: Այնուամենայնիվ, նրանց ամենամեծ

կենտրոնացումը տեղի են ունեցել Հայաստանում, Հարավային Կովկասում, Իրանում
և Միջագետքում:



Նկ.10 Հայերը Սնծովյան շրջանում

Համարվելով «իսկական» կովկասցիներ՝ Արմենոիդները համեմատաբար բարձրահասակ էին (170), սովորաբար միջինից մինչև մուգ շագանակագույն կամ սև մազերով, մաշկի մուգից մինչև միջին գույնի, մեծ կլոր աչքերով, որոնք սովորաբար մուգ շագանակագույն էին, կլոր, բրախիցեֆալ գլխի ձևով՝ ուղիղ ծոծրակով (պլանոկիպուտ), բարձր այտաբորբեր և ոչ մեծ ծնոտ: Շրթունքները բարակ էին, իսկ քթերը հաճախ արծվաքիթ: Արմենոիդների փոքրամասնությունը շիկահեր է և ունի կապույտ, կանաչ կամ խաժ աչքեր: Համարվում էր, որ այս ռասայական տիպը գերակշռում է որոշ հայերի, ասորիների և հյուսիսային իրաքցիների շրջանում:

Գլուխ 2

Աշխարհագրության ուսուցման մեթոդները

2.1 Աշխարհագրության ուսուցման մեթոդների դասակարգումը

Ուսումնական մեթոդի ձևակերպման մեջ առանձնացվում է երկու կողմ՝ արտաքին և ներքին : Արտաքին կողմը (օբյեկտային ասպեկտ) արտահայտվում է ուսուցչի գործողություններում , երբ նա ընտրում է գիտելիքի ձեռքբերման աղբյուրը , որով պետք է կազմակերպի աշակերտների աշխատանքը , ինչն արտահայտվում է մեթոդների և ուսումնական նյութի բովանդակության կապի մեջ: Օրինակ՝ եթե ուսուցիչը նյութը շարադրում է բանավոր, այդ պարագայում սովորողների համար գիտելիքների աղբյուրը նրա խոսքն է , իսկ խոսքի արտահայտման ձևը՝ պատմում , զրույց , դասախոսություն և այլն , մեթոդի արտաքին կողմն է:

Ներքին կողմը (սուբյեկտային ասպեկտ) աշակերտների կողմից ուսումնական տեղեկության մտավոր վերլուծությունն է , գիտելիքի տրամաբանական կառուցվածքի գիտակցումն ու իմաստավորումը: Այս գործունեությունը դիտարկելի չէ , քանի որ կատարվում է մտավոր գործողությունների միջոցով: Ուսուցիչն այդ մասին տեղեկանում է միայն արդյունքների ստուգման պահին: Ներքին կողմը մեծապես կախված է աշակերտի պատրաստվածությունից, ուսուցչի մասնագիտական վարպետությունից ու անձնային որակներից:

Ուսուցման արտաքին և ներքին կողմերը պայմանավորում են ուսուցման մեթոդի բինար կամ երկարգասիք բնույթը:

Մեթոդի բաղադրամաս է համարվում հնարը: Մեթոդական հնարը ուսուցման գործընթացի փոքրագույն կառուցվածքային միավորն է: Ուսուցման տարբեր մեթոդներում կիրառվում են հնարների տարբեր չափեր: Ինչքան բարդ է մեթոդը , այնքան ավելի շատ են նրանում պարունակվող հնարները , հետևաբար առավել բարձր է ակտիվացնող ներգործությունը:

Դիդակտիկայում տարբերակում են մեթոդների երեք խոշոր խմբեր

1. աշակերտների ուսումնական գործունեության խթանման մեթոդներ
2. ուսումնախմացական գործունեության կազմակերպման մեթոդներ

3. ուսումնախմացական գործունեության արդյունքների վերահսկաման մեթոդներ :

Առարկայական ուսուցման մեթոդիկաներում հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է մեթոդների երկրորդ խմբի՝ ուսումնախմացական գործունեության կազմակերպման մեթոդների վրա , որոնք դասակարգում են հետևյալ հիմքերով՝

- ըստ գիտելիքի ստացման աղբյուրի ,
- ըստ սովորողների իմացական գործունեության բնույթի ,
- ըստ ուսումնական նյութի պարզաբանման տրամաբանության (ինդուկտիվ և դե - դուկտիվ մեթոդներ) ,
- ըստ սովորողներ ինքնուրույնության աստիճանի:

Աշխարհագրության ուսուցման մեթոդիկայում գոյություն ունի և կիրառվում է ուսուցման մեթոդների երկու դասակարգում՝

- ըստ գիտելիքի ստացման աղբյուրի

ըստ սովորողների իմացական գործունեության բնույթի, որը պայմանավորված է գիտելիքի յուրացման տարբեր մակարդակներով:

Երկու դասակարգումների գոյությունը արտացոլում է մեթոդների բազմաբնույթ էությունը, դրանց արտաքին և ներքին կողմերը:

2.2 Բնակչության ռասսաների դասավանդման մեթոդները

Աշխարհագրության ուսուցման մեթոդները՝ ըստ գիտելիքների ստացման աղբյուրի:

Ըստ գիտելիքի ստացման աղբյուրի, աշխարհագրության ուսուցման մեթոդները բաժանվում են երեք խմբի :

- խոսքային մեթոդներ
- դիտազննական մեթոդներ
- գործնական մեթոդներ
- **1. Աշխարհագրության ուսուցման խոսքային մեթոդները:**

Աշխարհագրության ուսուցման մեթոդներից՝ ըստ գիտելիքի ստացման աղբյուրի առավել կարևորվում է խոսքային մեթոդը: Խոսքը մարդկային շփման գլխավոր միջոցն է: Առանց նրա հնարավոր չէ իրականացնել նաև ուսուցման գործընթացը: Ուսուցման խոսքային մեթոդները նույնքան հին են , որքան և ինքը՝ ուսուցումը:

Խոսքային մեթոդը ուսուցչի ու աշակերտի փոխկապակցված գործնության համակարգված եղանակ է , որն իրականացվում է խոսքի միջոցով:

2. Աշխարհագրության ուսուցման դիտագնական մեթոդները:

Այս խմբի մեթոդները տարբերվում են զննականության միջոցների կիրառմամբ: Դիտագնական մեթոդներում գիտելիքների աղբյուրներ են հանդիսանում տարբեր ուսումնական պարագաներ:

Դիտագնական մեթոդը ուսուցչի և աշակերտի փոխկապակցված գործնության համակարգված ձև է, որն իրականացվում է ցուցադրության միջոցով:

3. Աշխարհագրության ուսուցման գործնական մեթոդները: Գործնական աշխատանքներ:

Այս մեթոդներում գիտելիքների ստացման գլխավոր աղբյուր են հանդիսանում աշխարհագրական իրականությունը (բնական և հասարակական) ու նրա մոդելները (քարտեզներ , պրոֆիլներ , գրաֆիկներ , մանրակերտեր և այլն) :

Գործնական մեթոդները ուսուցչի ու աշակերտների փոխկապակցված գործողություններ են , որոնք ունեն իրենց առանձնահատկությունները .



Նկ. 11 Աֆրոամերիկացի աշխարհահռչակ երգչուհի , Բեյոնսե

Խոսքային մեթոդի միջոցով մենք կարող ենք աշակերտների մեջ սերմանել բարոյական արժեքներ, ապագայում բարեկիրթ հարաբերություններ և շքում այլ ռասսային պատկանող մարդկանոց հետ, քանի որ երեխաները տեսնելով մուգ մաշկ

ունեցող մարդու կարող են ծաղրել, սակայն չգիտակցելով, որ վիրավորում են դիմացիներին և որ ընդհանրապես ծիծաղելի և ծաղրելի չէ, եթե մարդը ունի մուգ մաշկ կամ մեծ քիթ, կախված թե որ ուսսային է պատկանում տվյալ անձը: Պետք է կարողանալ խոսքի և հաղորդակցության միջոցով աշակերտին հասցնել այն գիտակից մակարդակի որ մաշկի, մազի, և աչքի գույնով պայմանացվորված չպետք է պիտակավորել մարդուն, քանի որ դրանք ուղղակի ֆիզիկական հատկանիշներ են: Այս մեթոդի միջոցով է միայն հնարավոր գալ վերջնարդյունքի, քանի որ ոչ գործնական և ոչ էլ դիտագնական մեթոդով չենք կարող աշակերտի մեջ սերմանել բոլոր մարդիկ հավասար են գաղափարախոսությունը: Եվ կարող ենք նաև բերել բազմաթիվ օրինակներ թե դարերի ընթացքում ինչպես է փոխվել մարդկանց հայացքները:



Նկ. 12 Սևամորթ ստրուկը և սևամորթ Քոֆի Անանը ՄԱԿ-ի 7-րդ գլխավոր քարտուղարը

Նեգրոիդ ուսսային պատկանող մարդկանց համարում էին ստրուկներ, վաճառում էին նրանց, աշխատեցնում իրենց պլանտացյաներում, արգելում էին դպրոցներ հաճախել, սակայն այժմ նեգրոիդ ուսսային պատկանող բոլոր մարդիկ համահավասար են սպիտակամաշկներին, կարող են սովորել դպրոցներում և համալսարաններում, նրանցից հարյուրավոր մարդիկ դարձել են այնպիսի հանրահայտ երգիչ երգչուհիներ և դերասաններ որոնց ճանաչում են ամբողջ աշխարհում, զբաղեցնում էին այնպիսի պաշտոններ ինչպիսիք են օրինակ ԱՄՆ-ի 44-րդ նախագահ Բարաք օբաման կամ ՄԱԿ-ի 7-րդ գլխավոր քարտուղար Քոֆի Անանը:

Դիտագնական մեթոդով աշակերտներին կարող ենք ծանոթացնել բնակչության տարբեր ռասսաների հետ, հենց իրենց իսկ կերպարներով: Այսինքն մենք ստեղծում ենք կերպարներ որոնցից յուրաքանչյուրը համապատասխանում է որևէ ռասսայի: Նախապես ըստ աշակերտների արտաքին տվյալների ընտրում ենք թե, որ աշակերտը, որ ռասսային է համապատասխանում: Աշակերտներն այդ կերպ ավելի պատկերավոր են ընկալում ռասսաների տարբերությունն ու առանձնահատկությունները:

Վերոհիշյալ գրեթե բոլոր ռասսայական հատկանիշները ժառանգվում են միմյանցից անկախ և բազմաձին են: Սակայն մարդիկ ունեն նաև գենետիկական ավելի պարզ կառուցվածքով արեալային այլ առանձնահատկություններ: Ելնելով ռասսայական բոլոր հատկանիշների միագումարի փոփոխականության վերլուծությունից, դրվում է ըստ գենետիկական կապերի ռասսաների՝ արևմտյան և արևելյան խմբերի բաժանման հարցը:



Նկ. 13 Տարբեր ռասսաների ներկայացուցիչներ

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքի արդյունքները կարելի ներկայացնել հետևյալ եզրակացությունների և առաջարկությունների տեսքով

-Համաշխարհայնացման ներկայիս ժամանակահատվածում խիստ բազմազան ու անչափ հասանելի են դարձել տեղեկատվության և գիտելիքի ստացման աղբյուրները, որի պատճառով հանրակրթության նկատմամբ հասարակական վերաբերմունքը կտրուկ փոխվել է: Այդ փոփոխությունների հիմնական շեշտը դրված է ուսուցման մեթոդների անընդհատ վերանայման և կատարելագործման վրա:

Հանրակրթությունում ուսուցման մեթոդների կատարելագործման համատեքստում առանձնանում են աշխարհագրության ուսուցման տարբեր մեթոդները, քանի որ հենց աշխարհագրությունն է ապահավում աշակերտների մոտ աշխարհայացքային դաստիարակությունն ու կրթությունը:

Ուսուցման մեթոդների մեջ նորագույն տեխնոլոգիաների կիրառումը հանգեցնում է երկակի ազդեցության: Նախ. այն խիստ հեշտացրել է նյութի մատուցման հնարավորությունները և գրավչությունը: Սակայն, միևնույն ժամանակ այն ճնշում է խոսքային, բնական մեթոդներին, որը լուրջ ազդեցություն է ունենում աշակերտների լեզվամտածողության, ինքուրույն աշխատանքի, ինքնուրույն կատարելագործման վրա:

Այսպիսով, կարելի է ասել, որ յուրաքանչյուր դաս այս դեպքում բնակչության ռասսաների տեսակները ևս ունի իր մոտեցման ձևը և դա կախված է նյութի բարդության աստիճանից , աշակերտների ունակություններից և ուսուցչի ներկայացնելու և դասավանդելու ձևից:

Ընդհանրացնելով կարելի է ասել , որ ուսուցման արդյունավետությունը բարելավելու համար անհրաժեշտ է կիրառել նոր մեթոդներ և հնարներ:

Գրականության ցանկ

1. <https://hy.wikipedia.org/wiki/%D5%8C%D5%A1%D5%BD%D5%A1>
2. Վարդանյան Թ., Պետրոսյան Ա., Ասատրյան Վ., Հակոբյան Լ., Աշխարհագրության 7-րդ դասարանի դասագիրք , Երևան, 2023
3. Մինասյան Ա., «Աշխարհագրության ուսուցման մեթոդիկա» ուսումնական ձեռնարկ, Երևան, 2013 թ.:
4. Մինասյան Ա., «Աշխարհագրության ուսուցման մեթոդներն ու միջոցները» ուսումնական ձեռնարկ, Երևան, 2011 թ.:
5. Սարգսյան Խ. Բ., Աշխարհագրության դասավանդման մեթոդիկա, «Զանգակ-97», Երևան, 2002 թ.:
6. Сушкова О.Ю. Методика обучения география. М., 2009 г..
7. Петрова Е., Теория и методика обучения географии, Томск. 2010 г..

